

**Լուսարիփիկը հարցնում է օչին՝ ինչու՞ ինչ խայթեցիր:
«Փայլում էիր»,- հանգիստ պարասխանում է օչր:**


«Արմենիա», հ. 1, 1916



Սոնա Տարությունյանը գերազանց ավարտել է ԵՊՏ ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետը, 2006 թ. ստացել է բանասիրական գիտությունների թեկնածուի, իսկ 2011 թ.՝ դոկտորի գիտական ասիճանները: Գասավանդում է Վենեսիկի Կա'Փոսկարի համալսարանում: Եղել է այցելու դասախոսու Լոս Անջելեսի (UCLA), Ֆրեզնոյի (CSUF), Նյու Յորքի (CUNY) համալսարաններում, ինչդեռ նաև զեկույցներով հանդես եկել աշխարհի մի շարք համալսարաններում և գիտական հաստատություններում, այդ թվում՝ Տայասան, Իսպիա, Փրանսիա, Եվեյցարիա, Տունգարիա, Լեհաստան, Մալթա, Թայվան, ԱՄՆ, Կանադա: Տեղիական է հայոց գեղաստղաբանությանը, հայ դանթեագիտությանը, լեզվաբանությանը, թարգմանաբանությանը նվիրված երեք սասնյակից ավելի գիտական հրատարակումների: 2015 թ. հրատարակվել է Ս. Տարությունյանի «Հայոց գեղաստղաբանության թեման իսլավական գրականության մեջ» մենագրությունը (ԵՊՏ հրատ.): Նրա թարգմանությամբ լույս են տեսել Ա. Ներմեսի և Պ. Ուասիի «Հայերի Վենեսիկը» գիրքը (Մ.Պարթև, 2000), ինչդեռ նաև Ա.Արսլանի «Արտյոսների ազարակը» (Մ.Պարթև, 2007), «Չմյուռնիայի ճանադարհը» (Չանգակ, 2012) և «Մեռ գիրքը» (Չանգակ, 2014) հայոց գեղաստղաբանությանը նվիրված վեպերը:



ՍՈՆԱ ՏԱՐՈՒՅՈՒՆՅԱՆԻ ՎԵՍՏՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԳՐԱՄԱՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ ԻՏԱԼԻԱՅՈՒՄ: 1915



**ՍՈՆԱ ՏԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ՎԵՍՏՈՒՄ
ՑԵՂԱՄԱՊԱՆՈՒԹՅԱՆ
ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ
ԻՏԱԼԻԱՅՈՒՄ. 1915**

**ԵՐԵՒԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՆԱՍԱԼԱՐԱՆ**



[ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՆԱԽԱԼՄԱՐԱՆ]
ՎՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

SONA HAROUTYUNIAN

**L'ECO DEL GENOCIDIO ARMENO
IN ITALIA. 1915**

YEREVAN
Yerevan State University Press
2018

ՍՈՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ
ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐՆ ԻՏԱԼԻԱՅՈՒՄ.
1915

Երևան
ԵՊՀ հրատարակչություն
2018

ՀՏԴ 93/94
ԳՄԴ 63.3
Հ 422



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՓՅՈՒՌԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

*Երաշխավորված է
Երևանի պետական համալսարանի
գիտական խորհրդի կողմից*

Հետազոտությունը կատարվել է «Գիտական և գիտատեխնիկական գործունեության հիմնարար և կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտություններ» ծրագրի շրջանակում ՀՀ սփյուռքի նախարարության տրամադրած դրամաշնորհով:

Հարությունյան Ս.

Հ 422 Հայոց ցեղասպանության արձագանքներն Իտալիայում.
1915/ Ս. Հարությունյան. -Եր., ԵՊՀ հրատ., 2018, 144 էջ:

ՀՏԴ 93/94
ԳՄԴ 63.3

ISBN 978-5-8084-2283-4

© Ս. Հարությունյան, 2018
© ՀՀ սփյուռքի նախարարություն, 2018
© ԵՊՀ հրատ., 2018

ՍԱՍՈՒՆՑԻ, ՍՎԱՍՑԻ, ԿԱՐՍԵՑԻ,
ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼՑԻ, ՎԱՆԵՑԻ ՆԱԽՆԻՆԵՐԻՍ
ԵՎ
ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ԲՈԼՈՐ ՆԱՀԱՏԱԿՆԵՐԻ
ՀԻՇԱՏԱԿԻՆ

*Ամենեղների իսկական կորոքած ու
սպանդ եղաւ, շլալած մի դեպք, մի սև էջ,
մարդկության, քրիստոնեության և ազ-
գային պարկանելության ամենասուրբ
իրավունքների բացահայտ խախտու-
մով...*

Ջակոմո Գորրինի
Il Messaggero, 25 օգոստոսի, 1915 թ.

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1915 թվականին հայերն ու այլ քրիստոնյա փոքրամասնությունները դարձան երիտթուրքերի ազգայնամոլ բռնապետության թիրախ և ենթարկվեցին զանգվածային կոտորածների ու տեղահանությունների: Այս դեպքերին լայնորեն անդրադարձավ ժամանակի միջազգային մամուլը¹: Ինչպես նշում է Ալան Ուայթհորնը, հեղինակավոր *New York Times* լրագիրը, լուսաբանելով հայերի կոտորածները, զործածել է տարբեր բառեր և արտահայտություններ զարհուրելի տեսարաններն ու արարքները նկարագրելու համար, այդ թվում՝ «թալան», «մեծ արտագաղթ», «մեծ տեղահանություն», «զանգվածային տեղահանություններ», «տեղի բնակչության զանգվածային բնաջնջում», «երիտասարդ կանայք ու աղջիկներ, որոնց թուրքերը սեփականացնում էին, նետում հարեմներ, ոտնձգություններ կատարում նրանց նկատմամբ կամ էլ վաճառում ամենաթանկ վճարողին», «երեխաների զանգվածային առևանգումներ», «գեղեցկադեմ երիտասարդ աղջիկների առևանգումներ», «սպանություն, բռնաբարություն և այլ բարբարոսություններ», «նողկալի կտտանքներ», «կրծքերը կտրված են, եղունգները հանված, ոտքի թաթերը կտրված» և այլն²:

Ակնհայտ է, որ հեղինակները փորձում էին գտնել այնպիսի բառեր, որոնցով հնարավոր լիներ արտահայտել ահասարսուռ տեսարանների ու բարբարոս արարքների չափերը: Բացառություն չէր մաս իտալական մամուլը: Այն օգտագործում էր այնպիսի արտահայտություններ, ինչպիսիք են «հայերի մարտիրոսություն»

¹ Mekhitarian, Ohanian (2011).

² Whitehorn (2015: 110-111).

նը», «հայերի բնաջնջումը», «թուրքական վայրագություններ», «նահնդական վայրագություն», «օրհասական իրավիճակ», «սահմուկեցուցիչ դրվագներ», «արյունահոսող Հայաստան», «դժբախտ Հայաստան», «տոսկալի կոտորած», «լլկանքներ հայ բնակչության դեմ», «կենդանի այրել են», «դիակներով լի խորխորատներ», «տոսկալի տառապանքներ», «կեղեքում են հայերին», «թուրքական բարբարոսությունը», «սարսափազդու վայրագություններ», «մի ժողովրդի գողգոթան», «բնակչության նախճիրը»:

— IL MESSAGGERO - 8 Novembre 1915 —



*«Կենդանի այրել են մի հայ արքեպիսկոպոսի»,
Il Messaggero, 8 նոյեմբերի, 1915*

Հայկական կոտորածների օրերին Եվրոպայում ևս հազարավոր զինվորներ էին զոհվում, և հեղինակների կողմից այս լուրջ եզրաբանության օգտագործումը գաղափար է տալիս այն մասին, թե որքան ծանր էին Անատոլիայից հասնող լուրերը³: Մյուս կողմից, դեպքերը զարգանում էին Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում, և միջազգային մամուլը հաճախ, ցավոք, միտված էր վերլուծելու փաստերը Աշխարհամարտի ծիրի մեջ:

Իտալական մամուլը հիմնականում օգտվում էր երկրորդական աղբյուրներից, և լույս տեսնող համառոտ տեղեկությունները մեկնաբանվում էին որպես դժբախտ դեպքեր, պատերազմի ցավալի հետևանքներ: Չմոռանա՞նք նաև, որ Իտալիան ներքաշված էր պատերազմի մեջ, ուստի բնական էր, որ մամուլն առաջին հերթին լուսաբաներ երկրին անհանգստացնող հարցերը, հատկապես թրթի

³ Aliprandi (2009: 34).

սղության պայմաններում, երբ խնայողության նպատակով կրճատում էին թերթերի էջերը⁴:

Երբ իտալական մամուլն ըմբռնեց հայերի աղետի իրական չափը, գոհերի թիվն արդեն հասել էր հարյուր հազարների: Սակայն, եթե հաշվի առնենք այն փաստը, որ ցանկացած արհավիրքի մեծությունն ակնհայտ է դառնում միայն որոշ ժամանակ, նույնիսկ երբեմն տասնամյակներ հետո, ապա կարելի է ասել, որ արդեն իսկ կոտորածներին զուգահեռ, ժամանակի իտալական մամուլը բավականին ուշադիր է եղել հայկական հարցերին առնչվող տեղեկությունների հրապարակմանը՝ հաճախ տրամադրելով նույնիսկ լրագրի առաջին էջը:

Սույն ուսումնասիրության նպատակն է վերլուծելու, թե ինչպես էր արձագանքում 1915 թվականին Արևմտյան Եվրոպայի կարևորագույն պետություններից մեկը՝ Իտալիան, հայոց ջարդերին: Պարզելու համար, թե 1915 թվականի ընթացքում ինչպիսի լուրեր էին հասնում Իտալիա, ինչ խողովակների միջոցով (մամուլ, դիվանագիտական հաղորդագրություններ և այլն) և ինչ տեսանկյունից էին լուսաբանվում հայկական կոտորածներին առնչվող փաստերը, կատարվել է մատենագիտական հետազոտություն: Ժամանակագրական առումով առավել ամբողջական պատկեր ստանալու նպատակով, մամուլից առանձնացվել են կարևոր հոդվածներ և թարգմանաբար գետեղվել սույն հրատարակության մեջ⁵: Սա հնարավորություն է տալիս հայ ընթերցողին հաղորդակից լինելու բուն հոդվածին և անելու իր եզրակացությունները:

Առաջին գլուխը վերլուծում է իտալական զանազան թերթերում հրապարակված այն հոդվածները, որոնք անդրադառնում են հայկական կոտորածներին:

Երկրորդ գլուխը նվիրված է Տրապիգոնում Իտալիայի ընդհանուր հյուպատոս Ջակոմո Գորրինիի հայանպաստ գործունեու-

⁴ Նույն տեղում, էջ 22-23:

⁵ Թարգմանությունների հիմնական մասը կատարել է սույն հեղինակը՝ իտալերեն բնագրից:

թյանը: Առաջին անգամ տրված է 1915 թվականի օգոստոսի 25-ին *Il Messaggero* թերթում լույս տեսած ամբողջ հարցազրույցը՝ հայերեն թարգմանությամբ:

Երրորդ գլուխն անդրադառնում է 1915 թվականի հոկտեմբերից Տորինոյում կանոնավոր հաճախականությամբ հրատարակվող *Արմենիա* ամսագրի նյութերին:

Հետագա ուսումնասիրություններին օգտակար լինելու նպատակով Հավելված 1-ում ներկայացված է 1915 թվականին Իտալիայում հրատարակված հոդվածների ցանկն՝ ըստ ժամանակագրության⁶:

Հավելված 2-ում առաջին անգամ հայ ընթերցողին ներկայացված են 1915 թվականի ընթացքում հայկական կոտորածների առնչությամբ Իտալիայի Արտաքին գործոց նախարար Սոննինոյին հասցեագրված դիվանագիտական հաղորդագրությունները:

Ուսումնասիրության վերջում զետեղված է անվանացանկ, տեղանունների ցանկ և մատենագիտություն:

Սույն հրատարակությունը հնարավոր դարձավ շնորհիվ «Գիտական և գիտատեխնիկական գործունեության հիմնարար և կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտություններ» ծրագրի շրջանակում ՀՀ սփյուռքի նախարարության տրամադրած դրամաշնորհի, որի համար հայտնում ենք մեր խորին շնորհակալությունը:

⁶ Ցանկը պատրաստելու համար նպաստավոր եղան Ալիպրանդիի (2009), ինչպես նաև Մարտելլիի (2015) ուսումնասիրությունները: Տեքստը և տողատակը մատենագիտական հղումներով չծանրաբեռնելու համար նպատակահարմար ենք գտել գործածել «Հեղինակ (տարեթիվ: էջ)» կամ «(Հեղինակ, տարեթիվ: էջ)» տարբերակը, օրինակ, Whitehorn (2015: 110-111) կամ (Whitehorn, 2015: 110-111), իսկ ամբողջական մատենագիտությունը զետեղված է գրքի վերջում:

Գլուխ Ա

Հայոց ցեղասպանությունը և իտալական մամուլը. 1915 թ.

1915 թվականի հունվար-մայիս ամիսներին Իտալիայում տիրում էին քաղաքական խմորումներ: Պետությունը բաժանված էր ինտերվենցիոնիստների ու նեյտրալիստների միջև և հաստատուն քայլերով մոտենում էր պատերազմին մասնակցելու գաղափարին՝ Անտանտի կողքին: Չեզոք դիրքորոշում ունեցողները դատապարտում էին պատերազմը: Մինչդեռ ինտերվենցիոնիստները պատերազմի մեջ տեսնում էին Իտալիայի քաղաքական ազդեցությունն ընդարձակելու հնարավորություն: Ինտերվենցիոնիզմի մեջ կարևոր տեղ էր զբաղեցնում ձևավորվող ազգայնական շարժումը և իռեդենտիստական ընկերակցությունները, որոնց աջակցում էին ազգային մշակույթի որոշ նշանավոր գործիչներ, ինչպիսիք էին Գաբրիելե Դ'Աննունցիոն և Ֆիլիպպո Տոմմազո Մարինետտին: Շուտով նրանց է միանում նաև սոցիալիստ Բենիտո Մուսսոլինին, որը *Avanti!* թերթի սյունակներում չեզոք դիրքորոշում գրավելու կոչեր անելուց հետո, փոխում է միտքը, դառնալով պատերազմին իտալական մասնակցության առավել կատաղի կողմնակիցներից մեկը: Քաղաքական պայքարը շուտով տեղափոխվում է հրապարակներ և ուժեղ ճնշում գործադրում կառավարության որոշումների վրա: Այսպիսով, 1915 թվականի ապրիլի քսանվեցին, Իտալիան գաղտնի ստորագրում է Լոնդոնի համաձայնագիրը՝ Եռյակ դաշինքի ներկայացուցիչների հետ: Ըստ պայմանագրի, երկիրը պարտավորվում էր պատերազմ սկսել Անտանտի կողքին՝ Կենտրոնա-

կան ուժերի դեմ: Այսպիսով, 1915 թվականի մայիսի քսանչորսին, խորհրդարանի և Վիտտորիո Էմանուելե Գ.-ի լիակատար աջակցությամբ իտալական զորքերն անցնում են արևելյան սահմանը:

Նմանօրինակ քաղաքական շրջանակում, բնականաբար, իտալական մամուլը լուսաբանում էր պետության համար առավել կարևոր թեմաներ՝ ինչպիսիք էին Առաջին համաշխարհային պատերազմի բռնկումը և դրան նախորդող դեպքերը, որոնք ժամանակի բոլոր թերթերի հիմնական նյութերն էին:

Այդուհանդերձ, 1915 թվականի սկզբին, իտալական մամուլը սկսում է ուշադրություն դարձնել կովկասյան ճակատում տեղի ունեցող դեպքերին: Առիթը ստեղծում է Սարիղամիշի ճակատամարտը, որտեղ ցարական բանակը հայկական զորախմբի աջակցությամբ չեզոքացնում է օսմանական հարձակումը, որի գլուխ կանգնած էր Էնվեր փաշան: Միլանում հրապարակվող *Corriere della Sera* օրաթերթն իր հունվարի վեցի համարում տպագրում է «Ռուսները փախուստի են մատնել թուրքերին. ծանր պարտություն Կովկասում» վերնագրով մի հոդված, որում զետեղում է նաև ռազմական գործողությունները պատկերող մի քարտեզ՝ Արևելյան Անատոլիան ներկայացնելով *Հայաստան* անվամբ⁷:

Սա ցույց է տալիս, որ իտալական հանրային մամուլը տեղյակ էր տվյալ տարածաշրջանում հայկական աշխարհաքաղաքական իրականության գոյության մասին⁸: Հունվարի տասնիննին կրկին *Corriere della Sera* օրաթերթը «Հայաստանի սահմանին Թուրքիայի կատարյալ պարտությունը» վերնագրով մեկ այլ հոդված է տպագրում⁹: Լրագրողը մանրամասն անդրադառնում է ռազմական գործողություններին, սակայն չի տալիս հայերի վերաբերյալ որևէ տեղեկություն:

⁷ “Turchi sbaragliati dai russi – disfatta nel Caucaso”, *Corriere della Sera*, 6 gennaio, 1915.

⁸ Aliprandi (2009: 46).

⁹ “Completa sconfitta turca ai confini con l’Armenia”, *Corriere della Sera*, 19 gennaio, 1915.



Armenia, h. 1, 15 հոկտեմբերի, 1915, էջ 3

Ընդհանուր առմամբ, *Corriere della Sera* օրաթերթը մշտապես ուշադիր է եղել հայկական դեպքերին: Դեռևս 1901 թ. սեպտեմբերի 13-ին թերթը հրապարակում է «Վերսկավել են հայկական ջարդերը» վերնագրով մի հոդված, որում ասվում է.

Սեպտեմբերի 12-ի առավոտյան մեզ հեռագրում են Տրիեստից.

Կուրանդնուսուդից ժամանող հեռագրերը հաստատում են հայերի կոտորածները Մուշում: Հեղինակությունները նրանց մեղադրում են, որ կրակել են թուրքական զորքերի վրա, վիրավորելով կառավարչին, և դիմամիրով պայքերել են մի զորամաս՝ զինվորները ներսը:

Այս հոդվածից մի քանի օր անց, թերթը նորից գրում է.

1901, 19 սեպտեմբերի

Հաստատվում են հայկական նոր կոտորածները

Մեզ հեռագրում են Տրիեստից, 18 սեպտեմբերի, գիշեր.

Թուրքական կառավարությունը շարունակում է հերքել Մուշի և Էրզրումի մոտակայքում տեղի ունեցած հայկական կոտորածների լուրը, սակայն մասնավոր աղբյուրից այն հաստատում են՝ տալով սարսափելի մանրամասներ: Չինվորները քացել են հղի կանանց որովայնը: Ռուս զորավար հյուպատոսն իր կառավարության կողմից ուղարկվել է կոտորածների վայր՝ ընդարձակ հաշվետվություն ներկայացնելու:

Սուլթանը Եվրոպական տերությունների հակազդեցությունից վախենալով շրջաբերական ծանուցում ուղարկեց վալիներին (նահանգապետերին), հրամայելով իշխանություններին, որ արդար և անկողմնակալ կերպով վարվեն իրենց ղեկավարության տակ եկող անձանց հետ, անկախ վերջիններիս դասակարգից, ռասայական և կրոնական պարկանելությունից:

Ասում են, որ Սուլթանը, Մակ Քինլիի սպանությունից հետո, իր կյանքի համար վախենալով, թյուր լուրեր էր տարածել տվել, որ ժանդարի նոր համաճարակներ կան, օտարներին հեռացնելու և կարանրինի ենթարկելու նպատակով: Մինչ այդ, երիտթուրքերը, այդ թվում նաև Սուլթանի փեսա՝ Մահմուդ փաշան Սերբիայի Նիշ քաղաքում հանրահավաք հայտարարեցին՝ դարապարտելու համար Սուլթանի զործողությունները: Սակայն, դժվար թե Սերբիայի կառավարությունն այն արտոնի:

1904 թվականի հուլիսի 15-ին թերթը հրապարակում է մի հոդված, որում անդրադառնում է Կոստանդնուպոլսի ամենայն հայոց պատրիարք Օրմանյանի բողոքին պարբերական կոտորածների դեմ և Բարձր Դռան պատասխանին: Մեկ տարի անց, 1905 թվականի մայիսի 30-ին գրում է, թե ինչպես Բաքվի կառավարչին սպանելուց հետո Երևան նահանգի մահմեդականները սկսել էին կոտորել հայերին:

Մոսկվայից սրացված հաղորդագրությունները Կեղեկացնում են, որ Բաքվի կառավարչին սպանելուց հետո Երևանի նահանգի մահմեդականները սկսել էին կոտորել հայերին: Արդեն չորս օր էր, ինչ ընթանում էին կոտորածները, երբ սրացվեցին հեռագրերը: Մարդասպանները թալանում են մահացածների և վիրավորների փնները: Փողոցներում երևում են մոխրացած դիակներ: Հայերի դեմ հայտարարվել է սրբազան պատերազմ, հարյուրավոր հայեր սպանվել են Պարսկաստանի սահմանի մոտ:

Բնականաբար, *Corriere della Sera* օրաթերթի հոդվածների թիվը կտրուկ աճեց 1915 թվականի ընթացքում: Տեղահանությունների ու ջարդերի նախօրեին, 1915 թ. ապրիլի 16-ին թերթը հրատարակեց թղթակից Առնալդո Ֆրակկարոլիի կողմից Հայաստանի շրջաններ կատարած այցի մանրամասները: Լրագրողը հասկանում էր, որ գտնվում է մի մոռացված պատերազմի մեջ, որտեղ իրար են հաշորդում կոտորածները և թշվառությունը.

Իրավիճակը օրհասական է: Հսկայական և անընթաց հողերգություն է: Ողջ Արևմտյան Հայաստանը պարտուրված է սզի մեջ. կործանում, կոտորած, համաճարակ. թշվառություն, թշվառություն, թշվառություն... Քաղաքները վեր են ածվել գերեզմանոցների և հիվանդանոցների ...¹⁰

Ապրիլի 24-ից Կոստանդնուպոլսում ձերբակալեցին, բանտարկեցին, խոշտանգեցին ու կարճ ժամանակ անց սպանեցին անվանի հայերի: Հայազգի հասարակական, կրոնական, քաղաքական վերնախավին ոչնչացնելու այս եղանակը տարածվեց ողջ Օսմանյան կայսրությունում: Հայ ընտանիքների ունեցվածքը զանգվածայնորեն առգրավվեց պետության կողմից: Արագորեն հայաթավեցին հայկական գյուղերն ու քաղաքները: Կանանց, երեխաներին

¹⁰ Martelli (2015: 224).

ու ծերերին հրամայեցին մի քանի ժամվա կամ առավելագույնը մի քանի օրվա ընթացքում հավաքվել կենտրոնական հրապարակներում, որտեղից սկսվելու էին բռնի տեղահանությունները դեպի Սիրիայի անապատ: Բավարար սննդի, ջրի ու հագուստի բացակայությունը «մահվան քարավաններին» անասելի տառապանքներ պատճառեց՝ սով, ջրազրկում, բնակլիմայական պայմանների բացասական ազդեցություն¹¹: Երիտասարդ կանայք բռնաբարվում և առևանգվում էին թուրք ոստիկանների ու տեղի ցեղերի կողմից: Աննկարագրելի սարսափներ կրած կանանց, երեխաների ու ծերերի մեծ մասը ողջ չմնաց:

1915 թվականի մայիսի 4-ին «Թուրքերի կողմից իրականացված հայկական ջարդերը» վերնագրի ներքո *Corriere della Sera* թերթը հրապարակում է *Սյրեֆանի* գործակալության միջոցով ստացված Թիֆլիսի «Հայ գրագետների ընկերակցության» ապրիլի 30-ի ուղերձը՝ որում մասնավորապես ասված է.

Անհիշելի ժամանակներից հայ ժողովուրդը թուրքական անարգ հեղափոխումների գոհ է եղել: Մեր պատմությունն ու գրականությունը ոչ այլ ինչ են, քան անդրադարձն այն մարտիրոսության, որին նա ենթարկվել է: Մեր ազգի հանճարը ճնշվել է, և մեր անունն արտաբերվում է միայն ջարդերին անդրադառնալիս: Երբ մեր ազգի գոյարևման իրավունքի կոչն արեցինք, մեր վիճակն է՛լ ավելի վարթարացավ: Այսօր մեր իրավիճակը հուսահատեցնող է, քանի որ ծայրահեղ աղճատված թուրքական կառավարությունը, գուշակելով իր մտորալուր վախճանը, մոլեգնում է իր գոհերի դեմ և անզորեւն կուրորում Սև ծովից մինչև Միջագետք՝ անհետանալուց առաջ որոշելով ընդմիջար խեղդել հայ ժողովրդի ողբը: Հանուն մարդկության, քրիստոնեության և քաղաքակրթության, Հայ գրագետների ընկերակցությունն այս օրհասական պահին կոչ է անում Ազգերի խղճին և Չեզ, խնդրելով գրագետ

¹¹ Whitehorn (2015).

*շրջանակներին փոխանցել այս արտասովորական կոչը և ուժ-
գին շայն բարձրացնել, որպեսզի վերջ դրվի այս անպաշար-
պան դժբախտների ջարդերին:*

Ժամանակի մամուլի մեկնաբանությունների ջախջախիչ մե-
ծամասնությունը հաճախ առաջնորդվում էր գոյություն ունեցող
կարծրատիպերով, ինչպես օրինակ թուրքի պարագայում՝ հայտնի
որպես արյունարբու և մարդասպան: Եվ իրոք, տարբեր հողվածներ
կրում են նմանատիպ վերնագրեր՝ «Թուրքական չլսված վայրա-
գություն» (*L’Ora*, 26 հուլիսի), «Թուրքական վայրագության խելա-
հեղությունը. հազարավոր հայեր են սրախտոլխոլ եղել» (*Il Secolo*
XIX, 18 օգոստոսի), «Թուրքական նոր լկանքներ հայ բնակչու-
թյան դեմ» (*Il Mattino*, 12 սեպտեմբերի), «Թուրքերի սարսափազ-
րու վայրագություններն ընդդեմ հայերի» (*Il Secolo*, 26 սեպտեմբե-
րի), «Թուրքական ամոթալի վայրագություններ ընդդեմ հայերի»
(*Il Giornale d’Italia*, 13 հոկտեմբերի) և այլն:

Կոտորածների մասշտաբի ի հայտ գալուն զուգահեռ վերլու-
ծաբանները նաև փորձում էին տալ առաջին բացատրություննե-
րը: Ըստ տիրող հասարակական կարծիքի, 1915-ի կոտորածները
նորություն չէին Օսմանյան կայսրության պատմության մեջ: Մի
կողմից եվրոպական պետությունների նորակերտ ազգային գա-
ղափարախոսության ընկալումից *փարբեր* նկատված Մերձա-
վոր Արևելքի մասին ունեցած սակավ գիտելիքները, մյուս կողմից
միջազգային պատերազմական ծանր իրավիճակն ազդում էին
վերլուծությունների վրա: Թուրքերը մշտապես հալածել են քրիս-
տոնյաներին. սա է արմատացած տեսանկյունը: Հողվածներում
թուրքը մշտապես ներկայացվում է որպես անխիղճ մարդասպան.
«Թուրքերը մոլեգնում են դժբախտների դեմ: [...] Մեթոդը նույնն է.
ավեր, թալան, սպանություններ, եւ առավել դաժանություններ կա-
նանց եւ երեխաների հանդեպ»¹²:

Ըստ Մարտելլիի, հողվածագիրները, առաջնորդվելով արյու-
նարբու թուրք-մարդասպանի կարծրատիպով, հաճախ վրիպում

¹² “Il martirio dell’Armeni”, *Il Giornale d’Italia*, 11 settembre, 1915.

էին նշմարելու ցեղասպանության որոշ հստակ կողմեր, այդ թվում ազգայնամոլական համասեռման նախագծի ժամանակակից դրոշմը, որը կարելի էր ընկալել իրականացված բնաջնջման ծրագրի ետևում¹³:

Իտալական մամուլում հայկական կոտորածների լուսաբանումն ու վերլուծությունը պայմանավորված էր հատկապես ներքին և արտաքին պատճառներով: Կախված նրանից, թե այդ պահին ինչպիսի քաղաքական իրավիճակ էր տիրում երկրում, հանրային մամուլն անդրադառնում էր հայկական հարցին կամ երկրորդական համարում այն: Ալիպրանդին առանձնացնում է «պայմանականության գործոններ», որոնք նպաստել կամ բացասականորեն են ազդել իտալական մամուլում հայկական կոտորածների թեմայով նյութերի լույս ընծայմանը¹⁴: Դրական գործոնների թվում հեղինակն առանձնացնում է հետևյալ կետերը՝

- Հայ-իտալական պատմական, մշակութային, առևտրական և հոգևոր դարավոր կապերը¹⁵
- Իրավիճակի ծանրությունը, հանրության կարծիքի վրա ազդող գոհերի ծայրաստիճան բարձր թիվը
- Օսմանյան կայսրության դիվանագիտական և ռազմական դաշնակցությունը Ավստրիայի և Գերմանիայի հետ, որոնց դեմ Իտալիան 1915 թվականի մայիսին ներքաշվում է պատերազմի մեջ
- Հայերի ներկայությունը Եվրոպայում, որոնք հաճախ նպաստում էին լուրերի շրջանառությանը
- Հայերի քրիստոնյա լինելը. Անատոլիայում շրջապատված լինելով մահնեղականներով, է՛լ ավելի էր ընդգծվում նրանց ինքնությունը որպես Քրիստոսի հավատքի սյուներ:

¹³ Martelli (1915: 223).

¹⁴ Aliprandi (2009: 34).

¹⁵ Իտալիայի հայ համայնքի մասին, ի շարս այլ վավեր աղբյուրների, տե՛ս Ալիշան (1896); Ուդուրլեան (1891); Հերմետ, Ռատտի դի Դեզիո (2000); Peratoner (2006); Zekiyani (1990, 2000):

Ալիպրանդին առանձնացնում է նաև «բացասական գործոններ», որոնցով պայմանավորված էր իտալական թերթերի լուրջությունը, այդ թվում՝

- Ընթացող պատերազմն իր հաղորդագրություններով ստվերի մեջ էր պահում ցանկացած այլ լուր
- Տարածաշրջանի հեռավորությունը, որտեղ տեղի էին ունենում կոտորածները, դժվարացնում էին հաղորդակցությունը, լուրերը հասնում էին ուշացումով և ծեծվում այս և այն թերթերի էջերում, շատ հաճախ միևնույն լուրը զետեղվում էր տարբեր թերթերի մեջ¹⁶
- Թուրքիան, լինելով պատերազմի մեջ, արգելում էր լուրերի շրջանառությունը
- Թուրքիան իրականացնում էր կոտորածները, բնաջնջումն ու արքորը՝ մեծ քաղաքներից հեռու, սպահովելով գործողությունների գաղտնիությունը¹⁷:

¹⁶ «Քրիստոնյաների կոտորածները Պարսկաստանում» հոդվածը գետեղված է 1915 թվականի մայիսի 12-ի *Avanti!*, *L' Idea Nazionale*, *Il Messaggero*, *La Nazione*, *L'Osservatore Romano*, *Il Popolo d'Italia*, *Il Resto del Carlino*, *La Tribuna* թերթերում, «Կոտորել են չորս հարյուր հիսուն հազար հայերի» հոդվածը գետեղված է 1915 թվականի սեպտեմբերի 26-ի *Corriere della sera*, *La Perseveranza*, *La Stampa* թերթերում, «Միացյալ Նահանգները սպառնում են Թուրքիային» հոդվածը գետեղված է 1915 թվականի հոկտեմբերի 6-ի *La Gazzetta del Popolo* և *Il Giornale d'Italia* թերթերում, «Չայրույթ Անգլիայում հայկական կոտորածների համար» հոդվածը գետեղված է 1915 թվականի հոկտեմբերի 9-ի *Il Giornale d'Italia*, *Il lavoro*, *La Tribuna* թերթերում, «Ցույց Սորբոնում Հայաստանի պատվին» հոդվածը գետեղված է 1915 թվականի ապրիլի 11-ին *L' Idea Nazionale* և *La Gazzetta del Popolo* թերթերում, «Հինգ հազար հայեր են սպանվել թուրքերի կողմից» հոդվածը գետեղված է 1915 թվականի սեպտեմբերի 23-ի *Il Mattino*, *Il Resto del Carlino*, *La Tribuna* թերթերում, «Հանուն ազատ Հայաստանի» հոդվածը գետեղված է 1915 թվականի դեկտեմբերի 31-ի *Il Mattino*, 1916 թվականի հունվարի 3-ի *L'Ora* թերթերում, «Թուրքական կառավարությունը պատասխանատու է հայերի կոտորածների համար» հոդվածը գետեղված է 1915 թվականի մայիսի 25-ի *Il Messaggero*, *L'Ora*, *La Perseveranza*, *La Stampa*, *La Tribuna* թերթերում, «Թուրքական վայրագություններն ընդդեմ հայերի» հոդվածը գետեղված է 1915 թվականի օգոստոսի 19-ի *La Stampa*, *La Tribuna*, *Il Mattino*, *Il Secolo XIX* թերթերում, «Գերմանացի հյուպատոսները ղեկավարում են հայկական կոտորածները» հոդվածը գետեղված է 1915 թվականի հոկտեմբերի 1-ի *La Stampa* և *Il Secolo* թերթերում, և այլն: Լրացուցիչ մանրամասների համար տե՛ս հավելված 1:

¹⁷ Aliprandi (2009: 36).

Լուրերի շրջանառության խափանման առիթով, 1915 թվականի օգոստոսի 21-ին Հռոմի *La Tribuna* թերթը գրում է.

*Մեկ այլ սյունը, որի վրա հենվում է երիտթուրքերի հասարակությունը՝ գրաքննությունն է: Ծայրաստիճան խիստ է: Մամուլն իրավունք ունի հրապարակելու միայն պաշտոնական աղբյուրներից ստացված տեղեկությունները: Արգելված է Թուրքիա ներմուծել գերմանական ու ավստրիական մամուլից բացի որևէ այլ արտասահմանյան լրագիր: Ամեն օր մարդիկ են շերքակալվում սրճարաններում, փողոցում: Մեղադրվում են նաև տան պարերի ներսում արված խոսակցությունների համար: Հանցա՞նքը՝ խոսել եք քաղաքականության մասին, որևէ չե՞նո՞վ քննադարել եք կառավարությանը կամ որևէ հեղինակության, կասկած եք հայտնել պարերագմի վերջնական արդյունքի մասին, որը «պերք է հաղթական լինի Օսմանյան կայսրության համար»: Լրտեսներ կան ամենուր [...]*¹⁸:

Հայոց ցեղասպանությունը գլխավորապես իրագործվեց 1915 թվականից սկսած, թեև երիտթուրքերն ավելի վաղ էին մշակել իրենց գաղտնի ծրագրերը: 1915 թվականի փետրվարից օսմանյան բանակի հայ զինձառայողներին զինաթափեցին, այնուհետև կա՛մ սպանեցին, կա՛մ էլ ուղարկեցին հարկադիր աշխատանքի գումարտակներ, որտեղ նրանցից շատերը մահացան հյուծող աշխատանքից, օթևան չունենալուց և սննդի պակասից: Դրանից հետո սպանեցին նաև այն սակավաթիվ մարդկանց, ովքեր դիմակայել էին այդ դաժան պայմաններին:

Ազգայնական խմբակցության 1911 թվականին Հռոմում հիմնադրված *L' Idea Nazionale* շաբաթաթերթն ուշադիր էր հայկական հարցին և միակն էր, որ 1915 թվականի փետրվարի 16-ին տեղեկատվություն տրամադրեց կոտորածների մասին: Նույն թերթն

¹⁸ Նույն տեղում, էջ 48:

արդէն իր հունվարի մեկի համարում մի հոդված էր տպագրել «Թուրքական վայրագություններն անպաշտպան բնակչության դէմ» վերնագրով, որում մասնավորապէս ասված էր. «Թուրքերը վայրագություններ են իրականացնում անպաշտպան բնակչության հանդէպ: Նրանք կտորրել են ամբողջական գյուղերի բնակիչներին...»¹⁹:

Offensiva turca respinta nel Caucaso

Occupazione della linea Nimur-Agadave

PIETROGRADO, 29.
Un comunicato dello Stato Maggiore dell'Esercito del Caucaso in data 28 corrente dice:

In direzione di Otzu le nostre truppe hanno arrestato al di là del fiume Laurin l'offensiva di considerevoli forze turche.

Nella regione di Sarikamish le operazioni si sviluppano.

Nella regione di Duzak la nostra offensiva è terminata il 26 dicembre con l'occupazione della linea Nimur-Agadave, donde i Turchi si sono ritirati dopo aver subito perdite considerabili e lasciato fra le nostre mani molti prigionieri.

Sulle altre parti del fronte non vi sono mutamenti.

I turchi fuggiti da artiglieria russa

PIETROGRADO, 31.
Un comunicato dello Stato Maggiore dell'Esercito del Caucaso in data del 30 dicembre dice:

Continua il combattimento a Sarykamish contro grandi forze turche. Il fuoco della nostra artiglieria ha scoperto una forte colonna turca che venne in fuga dopo aver perduto metà dei suoi effettivi.

Una parte delle forze turche è concentrata nella regione del cauc. di dalgoutchikau e di Bagdad e marcia su Ardahan.

Atrocità turche contro inermi

PIETROGRADO, 30.
Un comunicato dello Stato Maggiore dell'Esercito del Caucaso dice:

Nella regione di Olymkashen le nostre truppe hanno preso l'offensiva ed hanno occupato Mordank.

Nel pressi di Sarykamych combattiamo con successo un esercito che marcia verso nord-ovest.

Nella direzione di Soymsak e di Dhoross una serie di attacchi accaniti dai nemici furono respinti da contrattacchi alla baionetta delle nostre truppe.

I Turchi commettono atrocità contro gli abitanti inoffensivi. Essi hanno massacrato le popolazioni di interi villaggi come fu constatato da processi verbali.

DE GREGORIO.

Fremiti rivoluzionari a Costantinopoli

Complotti contro Enver Passia

(Nostra servizio particolare)

BRINDISI, 29.
Informazioni di fonte sicura pervenute da Costantinopoli, confermano così quanto le fonti a noi segnalate sulle voci di arresti in massa volti operati dalla polizia, di complotti, ecc.

La popolazione musulmana è ora in uno stato di grande paura al cospicuo dei reparti turco e turco-islamico di Istanbul, e comincia a temere che le forze degli alleati possano un giorno o l'altro violare gli stretti e giungere a Costantinopoli.

Un grande sordido complotto Enver è in corso in questi giorni in città. Il complotto Enver è in corso in questi giorni in città. Il complotto Enver è in corso in questi giorni in città.

Una insurrezione di armeni

PARIGI, 18.

Il New York Herald reca:
Un dispaccio dal Cairo dice che c'è motivo di credere a una sollevazione degli armeni di Zeitun in Cilicia, i quali trattengono così la forza di due divisioni di riserva turche.

«Հայերի ապստամբությունը»,
Il Messaggero, մայիսի 19,
1915, էջ 7

¹⁹ «Atrocità turche contro inermi», L'Idée Nationale, 1 gennaio, 1915.

Ուսումնասիրված հոդվածները հստակորեն ներկայացնում են, որ թուրքական կառավարության մոտ իշխում էր փոքրամասնության վերացման գաղափարը: Մայիսի 19-ին *Il Messaggero* թերթը պատերազմական լուրերի շարքում հրատարակում է «Հայերի մի ապստամբություն» վերնագրով հոդվածը, որն անդրադառնում էր Ջեյթունի դեպքերին:

Փարիզ, 18

New York Herald-ը փեղեկացնում է.

Կահիրեից արացված մի հաղորդագրության մեջ ասվում է, որ պարճառ կա հավատարալու, որ Ջեյթունի հայերը ապստամբել են, այսպիսով զսպելով թուրքական պահեստարային երկու զորաբաժնի ուժը:

Լրագրող Կարլո Սկարֆոլիոն ևս մի երկար հոդվածում անդրադառնում է Ջեյթուն քաղաքին և զեյթունցիների ինքնապաշտպանությանը:

Բացի արտաքին վրանգի դեմ պաշտպանությունից, Օսմանյան կառավարությունը պետք է հաշվի առնի ներքին հարցը, որը մի որոշակի պահի թվաց, թե սրման ճանապարհին է: Մեկ շաբաթ քաղաքում խոսվում էր հայկական դավադրության մասին, և ըստ լուրերի, հայերի շերքակալությունների թիվը հասավ չորս հարյուրի: Դրանք իրականացվում էին հանրային կերպով, ուստի իրավունք ունեւ խոսելու դրանց մասին: Ամեն դեպքում, իրավունք ունեւ, թե ոչ, սա իմ լրագրողական պարտքն է, նույնիսկ եթե խոսելն անշիս խնդիր պարճառի: Ունեցածս լուրերի համաձայն, չեմ կարծում, որ կարելի է խոսել մի իսկական դավադրության մասին. կարծում եւ, սակայն, որ հայերը քացառապես չհսկական քնույթի ինչ-որ հիմարություն են արել, որի հետևանքով եղել են հալածանքներ, իսկ այս պարագայում՝ զինվորա-

կան օրենքի կիրառում ու փարբեր խավերին պատկանող բազմաթիվ հայերի փեղահանում: Հայերը ծայրաստիճան խելացի ազգ են և խորթ զինվորական գործողություններին: Արտաստվոր երևակայությունը հանգեցնում է նրանց փարօրինակ մտադրացման, սակայն ժառանգական ամորթ-խածությունը արգելում է դրա իրագործումը. և ամենափարօրինակն այն է, որ գործ ունեն թուրքերի հետ, մի ազգ, որն ամբողջովին զուրկ է երևակայությունից, սակայն ծայրաստիճան պատրաստ է ռազմական գործողությունների: Եվ այսպես եղավ, որ 1896 թվականին ութ փկարամիտներ, որ ճաշակեցին Օսմանյան դրամարանը փակվելու և հետո ոչ-խարաների պես հանչնվելու համը, Աբդուլ Համիդին առիթներկայացրին, որպեսզի գորազնդեր ուղարկեր ամբողջ քաղաքով հայերին հետապնդելու և փխրահռչակ ջարդերը կազմակերպելու համար: Այս անգամ կարծես հայերը վազն են անցել Պերա փողոցի վրա գրնվող *Au Mikade*, կամ հունարեն՝ *O Micado* գրնգուն ցուցարարակով մի հին խանութից անգլիական և ֆրանսիական մի խուրճ դրոշակներ գնելու իրենց մանկամիտ գայթակղությունից: Կասկածից վեր է, որ հայերի մի զգալի մասը սրտում փայփայում է անկախության հասնելու երազանքը, և հույս ունի, որ շարավելի փրամաքանական է, որ Տրապիզոնի կայսրությունը վերականգնվի անգլիացիների, քան ռուսների կողմից: Բայց մինչ հարկավոր է ընդունել, որ անպարեհ պահ էր ընտրված անգլիամետ միջոցառումներին փրվելու համար, չգիտեմ թե ի՞նչ ավելի լուրջ քան կար հայերի դավադրության մեջ, քան երեխայությունը, որը բնորոշում է քաղաքի մնացյալ հայ երիտասարդությանը, որը փուրք փայուց առաջ երբեք չի խորհում, թե ինչ ահռելի վրանգի է ենթարկում գավառաբնակ հայերի թշվառ ու փանջալից կյանքը: Պետք է սսեմ, որ չնայած Կոստանդնուպոլսում դավաճանության համար չերթակալված հայերի մեծ քանակին՝ չենք նկատել

ոչ մի վայրագություն, գոնե հանրային մակարդակով: Այն ինչ տեղի է ունենում Վանում, Գիարքեքիրում և Ադանայում, բնականաբար, անհնարին է իմանալ: Ամեն դեպքում կարելի է հաստատել, որ գեյթունցիները՝ սարերում մարտնչող միակ հայերը, հավատարիմ զինվորական պարավոլորություններին՝ պարասիսանեցին հրաշգույնություններին: Սակայն, սա տեղի է ունենում ամեն գարուն և հայրնի է, որ գեյթունցիները, այլևս կորցրած իրենց հույսը եվրոպական միջամտությունից, կարարելապես սովորեցին պաշտպանելու իրենք իրենց և հայկական ինքնավարության դրոշը, որը փարիկներ շարունակ ծածանվում է Ջեյթունի անառիկ սարերում: Սակայն սա մի կղզիացած տեղական դրվագ է, որը մի կողմից չի կարող Օսմանյան կառավարության համար մի իսկական հայկական վրանգ ներկայանալ, մյուս կողմից չի կարող համարվել ամբողջ հայ համայնքի կողմից իրականացված ոճիր: Այն ամենը ինչ կարելի է ավելացնել հեղեղային է, որ Կոստանդնուպոլսում չեղբակալված հայերին տեղափոխել են Անգորա, որտեղ հավանաբար կապսենն պատերազմի ավարտին: Այսպիսով, այս վրանգը կարծես կանխված է, եթե, իհարկե, իրականում վրանգ կար: Սակայն, կրկնում են, հայերը բնականաբար չափազանց հեռու են ռազմական գործողություններով մի իրական վրանգ արեղծելուց: Որքանով ինչ հայրնի է քաղաքներում արված հարակեցումներից, ավելի հավանական է, որ մի իսկական դավադրության փոխարեն եղած լինի անկարգապահություն, որն արթնացրել է թուրքերի հայրենասիրության ցասումը [...]: Քաղաքում ճնշումները սահմանափակվեցին մի քանի չեղբակալությամբ, առաջնորդվելով պատերազմական օրենքով, առանց հաշվի առնելու խորհրդարանական առանձնաշնորհությունն ու կրոնական դիրքը, և հաջորդաբար ուղեկցվեցին տեղահանություններով: Եվ եթե հայերի հանդեպ արելության թուրքական ցասումը գրգռելու որևէ

նոր առիթ չներկայանա, հավանական է, որ այդքանով սահմանափակվեն: Ինչ վերաբերում է զավառների դեպքերին, անհրաժեշտ մանրամասներ չունեն եզրակացություններ անելու համար²⁰:



La Nazione քերթը լուսաբանելով Ձեյթունի դեպքերը, սխալ է քույլ տալիս, վերնագրում գրելով Ֆելտում՝ Ձեյթունի փոխարեն:

Իտալական մամուլում տեղ գտած հոդվածներն անդրադառնում էին Օսմանյան կայսրության ոչ միայն հայ, այլև մյուս քրիստոնյա համայնքների նկատմամբ կիրառվող սարսափելի միջոցների: Մայիսի 12-ին *L'Idée Nazionale* քերթը հրատարակում է «Քրդերի իրագործած չլաված բռնությունները Պարսկաստանի քրիստոնյաների դեմ» հոդվածը, որում մասնավորապես ասված է.

²⁰ Aliprandi (2009: 54-56), թարգմ. Է. Հայրապետյան:

Լոնդոն, 11 [մայիսի]

Լոնդոն են հասել քրիստոնյաների սարսափելի կոտորածների մասին լուրերը, որոնք իրականացվել են հյուսիսարևմտյան Պարսկաստանում քրդերի կողմից: Ուրմիայում ամերիկյան առաքելության ղեկավարը վկայում է, որ հազար քրիստոնյայի են սպանել և ես երկու հազարը մահացել է հիվանդությունից: Ռուսաստանի փոխ-հյուպարոսն իր հերթին հաղորդում է, որ Ուրմիայում բռնաբարում և սպանում են կանանց, հրդեհում գյուղեր և այրում սուրբ գրքեր: [...] Ութսունհինգ անվանիների ամուր կապել են միմյանց, ուղեկցել գերեզմանատուն և կոտորել հարազարների աչքի առջև: Մի վարդապետի խաչել են, մյուսին՝ կենդանի այրել, կախել են մի եպիսկոպոսի: Կաթողիկե առաքելության պաշտպանության ներքո պարսպարված բոլոր անձինք քարջ են փրվել Թուրքիայի հյուպարոսի առջև: Նրանցից վաթսունչորսին զլիսարել են²¹:

Իտալական ինը թերթեր, այդ թվում *Il Messaggero*, *La Nazione*, *L'Osservatore Romano*, *Il Popolo d'Italia*, *Il Resto del Carlino*, *La Tribuna*, *Avanti!*, *La Perseveranza* և *Corriere delle Puglie* թերթերը հրատարակում են միևնույն հոդվածը՝ «Քրիստոնյաների կոտորածները Պարսկաստանում» վերնագրով (վերջին երկու թերթում բացակայում է «Պարսկաստանում» բառը):

Մայիսի 21-ին *Corriere della Sera* թերթը հրատարակում է «Հայերը և պատերազմը» վերնագրով մի հոդված, որում մտահոգություն է հայտնում այն հայ երիտասարդների մասին, ովքեր թորքահպատակ են, բայց սպրում են Իտալիայում: Հոդվածագիրը կոչ է անում գերծ մնալ թշնամի Թուրքիայի հպատակների դեմ միջոցներ գործադրելուց և չարտաքսել նրանց: Հոդվածում ասված է.

²¹ “Inauditi atti di ferocia dei Curdi sui cristiani di Persia”, *L’Idea Nazionale*, 12 maggio, 1915, p. 2.

Ենթադրելով, որ Թուրքիան ևս պատերազմի մեջ կներ-
քաշվի Բուլղարիայի դեմ, դոկտ. Բռունո Բովելյաչին մեզ գրում
է բազմաթիվ հայ երիտասարդ ուսանողների և մասնագետ-
ների առնչությամբ, ովքեր հիմզ փարի Վենետիկի հայկա-
կան վարժարանում ուսումնառությունից հետո շարունակել
և շարունակում են սովորել մեր համալսարաններում, վկայե-
լով իրալացիների և Բուլղարիայի հանդեպ ունեցած վստահե-
լի և կենսունակ բարեկամությունը: Եվ կոչ է անում, որպեսզի
նրանց գերծ պահեն թշնամի պետությունների հպարակնե-
րի դեմ գործադրած միջոցներից, ինչպես արտաքսումը և
այլն:

Ճիշտ է, հայերը թուրքահպարակ են, բայց հպարակ
այնպես, ինչպես իրալացիները հպարակ են ավստրիա-
ցիներին՝ չազարագրված փարածքներում, և եթե իրալա-
ցիները բազմաթիվ պարճառներ ունեն ավստրիացիներին
ստեղծելու, հայերը դարեր ի վեր արյունահոսում են անհույս
մարտիրոսությամբ, որի նմանը չկա ժողովուրդների պար-
մության մեջ:

Մինչ օրս թուրքը չի վարանում ստիպելու հայերին, որ
մարտնչեն իրենց բարեկամ ռուսների դեմ, մինչդեռ ներսից,
երկիրը դնում է ծայրահեղ հուսահատության մեջ՝ թշվա-
ռության, թալանի, կոտորածների, բռնաբարությունների
հերկանքով, որոնց ենթարկվում է անպաշտպան բնակչու-
թյունը [...]:

Թուրքերի ենթակայության փակ գրկվող Հայաստանը
հանդիսանում է հռոմեական քաղաքակրթության վերջին
փեշը՝ ճնշված բարբարոսների կողմից: Լեզուն, գրականու-
թյունը, գեղարվեստը, պարմությունը, հնամենի հուշարձան-
ների մնացորդները, ամեն ինչ խոսում է այս ազնվական և
դժբախտ ժողովրդի օգրին, որն իր երկիրը քաղաքակրթու-
թյամբ փայլեցնելուց և քաջաբար պաշտպանելուց հետո գոհ
է դարձել այն ամոթալի փրկապետության, որն է թուրքակա-

նր: «Այս բարի, ազնիվ, ազնվական, դաժանորեն ճնշված ժողովրդին,- գրում է դոկտ. Բուլետաչչին,- այս եղբայրներին, որոնք ապրում են այն միջոցով, որ մի օր իրենց կյանքն են տալու երկիրն ազատելու համար, որ երկշոր խիւնքով հետևում են թուրք-ջարդարարների կործանվելուն, բոլոր նրանց պէտք է ուղղված լինի իրալացիների սիրտը, [...] որպեսզի (հայերը) իրեն սիրված և ընթրնված զգան: Ֆրանսիացիները, անգլիացիները հայրաքարել են հայերին որպես իրենց հայրենակիցներ: Մի՞թե մենք ուզում ենք եր մնալ»:



«Հանդիսություն Սորբոնում՝ Հայաստանի պատվին»,
L'Idea Nazionale,
11 սպրիլի, 1916

Հողվածագիրները հաճախ դիտարկում էին միջազգային իրադարձությունները ներքին խնդիրների տեսակետից, և հրատարակվող հողվածներն ընդհանուր առմամբ մեկնաբանվում էին ելնելով լրագրի քաղաքական կողմնորոշումից: Այս առումով, հատկանշական է սոցիալիստական *Avanti!* թերթը, որը հայկական կոտորածների մեջ վտանգված էր տեսնում սոցիալիստական գաղափարախոսությունը:

1915 թ. մայիսի 25-ին *Il Messaggero*, ինչպես նաև *L'Osservatore Romano, Avanti!* թերթերը հրապարակում են հայերի կոտորածների մասին Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի և Ռուսաստանի կառավարությունների պաշտոնական հայտարարությունը²²: Հոդվածները դատապարտում էին տեղի թուրք և քուրդ բնակչության ձեռքով և օսմանական իշխանությունների մասնակցությամբ իրականացված կոտորածները:

Il Messaggero թերթում հրապարակված համառոտ գրությունը վկայում է, որ արևմտյան տերություններն արդեն հասկացել էին իրավիճակի ծանրությունը.

Լոնդոն, 24 [մայիսի]

Մի պաշտոնական տեղեկատվություն հրապարակում է Բարչր Դռանն ուղղված դաշնակիցների հայտարարությունն առ այն, որ Օսմանյան կառավարության անդամները պարասիասևարություն կկրեն հայկական կոտորածների համար:



«Թուրքական կառավարությունը պարասիասևարու է հայերի կոտորածների համար», Il Messaggero, 25 մայիսի, 1915

Ըստ Մարտելիի, «Եռյակ դաշինքի միասնական հայտարարության հրապարակումը կարելի է համարել մինչ այդ հայերի կոտորածների մասին հրապարակված ամենակարևոր նորությունը: Սակայն իտալական թերթերը դժվարանում են ըմբռնել, որ միաս-

²² *Il Messaggero, L'Osservatore Romano, Avanti!*, 25-26 մայիսի 1915:

նական հայտարարությունը հարցը բարձրացնում է միջազգային հարթակի մակարդակով եւ ակնհայտ մեղադրանք է Թուրքիայի դեմ»²³:

Հայկական հարցերի շուրջ իտալական մամուլում որոշակի աշխուժություն գրանցվեց օգոստոսի վերջին, պայմանավորված նախ և առաջ այն պատճառով, որ թուրք-իտալական հարաբերությունների ճգնաժամը հասավ իր գագաթնակետին, և 1915 թվականի օգոստոսի 21-ին Իտալիան պատերազմ հայտարարեց Օսմանյան կայսրությանը: «Հավաքական գիտակցության մեջ Մուլթանի բանակի դեմ պատերազմը արթնացնում է երկու միանգամայն տարբեր եւ իրար հակասող քաղաքակրթությունների միջեւ բախման պատկերներ,- գրում է Մարտելլին,- մի կողմից քաղաքակիրթ եւ քրիստոնյա Եվրոպան, մյուս կողմից ասիացի ու մահմեդական օսմանյան հասարակությունը: Այս առթիվ հաճախ հիշվում են դարավոր պայքարի վճռական փուլերը՝ Կոստանդնուպոլսի գրավումը, Լեպանտոյի ճակատամարտը, և այս ամենի մեջ հայերը ներկայացնում են արևմտյան քաղաքակրթությունը Արևելքի սրտում»²⁴:

Հայկական կոտորածները ներկայացնելը պատեհ առիթ էր վարկաբեկելու հակառակորդին և օրինականացնելու միջամտությունը: *Il Popolo d'Italia* թերթի խմբագիր Բենիտո Մուսսոլինին, խանդավառությամբ մեկնաբանելով Իտալիայի կողմից Օսմանյան կայսրությանը պատերազմ հայտարարելը, գրում է.

Կա ևս մեկ այլ ժողովուրդ, որը տառապում է թուրքական տիրապետության աննկարագրելի լծից: Դա հայ ժողովուրդն է: Միանգամայն վերջերս լուրերը հայտնեցին, որ թուրքական հորդաները կոտորել են հազարավոր հայերի: Երկու շաբաթ առաջ լուր սրացվեց, որ Կոստանդնուպոլսում քսան սոցիալիստների կախաղան են բարձրացրել իրենց հայրենիքը սիրելու և երիտթուրքական ռեժիմին դիմադրե-

²³ Martelli (2015: 225).

²⁴ Նույն տեղում, էջ 213-231:

լու համար: Այդ քսան կորրված կյանքը ևս վրեժ է պահանջում և կարանա²⁵:

Այս հոդվածը «Վրեժ» վերնագրով արտատպվել է նաև Տորինոյում հրատարակվող *Armenia* ամսագրի 1915 թվականի հոկտեմբերի 15-ի անդրանիկ համարում:

Vendetta !

Mussolini, il generoso e battagliero direttore del *Popolo d'Italia*, nel suo articolo di fondo « Guerra al turco », del 22 agosto, scriveva:

« V'è un altro popolo che soffre le torture indicibili della dominazione turca: l'armeno. Ultimissimamente le cronache parlarono di migliaia e migliaia di armeni massacrati dalle orde turche. Due settimane fa giunse notizia che a Costantinopoli erano stati impiccati venti socialisti, rei del delitto di avere amato la loro patria e di avere cospirato contro il regime giovine-turco. Anche quelle venti vite spezzate reclamano vendetta e l'avranno. »

«Վրեժ», *Armenia*, h. 1, 15 հոկտեմբերի, 1915, էջ 11

Avanti! թերթն իր հերթին հունիսի 20-ին վերցնելով հետևյալ նյութը *La Gezzatta del Popolo*-ից, օգոստոսի 16-ի համարում մամուլում անդրադառնում է դեպքերին.

²⁵ Benito Mussolini, «Guerra al turco», *Il Popolo d'Italia*, 22 agosto, 1915.

Յյուրիիս 15 [օգոստոսի]

Օրեր առաջ թուրքական կառավարության պաշտոնական մի հաղորդագրություն սահմնկեցուցիչ նորություն էր փարածել ողջ աշխարհով, որն, այդուհանդերձ, մարդկային կուրորածների մասին բազմաթիվ հեռագրերի մեջ արձագանք չստացավ:

«Հուլիսի 16-ի լուսարացին,- ասվում էր այդ հաղորդագրության մեջ,- պարերազմի գերագույն դատարանի որոշմամբ կախաղան են բարձրացվել Հնչակյան սոցիալիստական կուսակցության քսան անդամներ»:

Ինչ վերաբերվում է այդ դժբախտների գործած հանցագործությանը, պաշտոնական հաղորդագրությունը գերծ էր հարակեցումներից: Այն միայն ասում էր, որ կախաղան հանվածները մեղավոր են ճանաչվել, քանի որ չզբլել են սրեղծելու ինքնավար, անկախ Հայաստան, և, այս նպատակին հասնելու համար ցանկացել են Կայսրությունից մի հարված անջարել: Այդ նպատակով կազմակերպել են գաղղրնի և հանրային ժողովներ թե՛ ներսում, թե՛ արլրասահմանում և փարածել հայրարարություններ և գրքույկներ:

Սոցիալիզմի և ազարության այս նահարակների մասին Berner Tagwacht-ում հերաքրքիր նորություններ է հրապարակում Դումայի երեսիոխան Արշեֆ Սուրակովը, որն այդ ընկերների հեր ուղղղ կապի մեջ էր: Բոլոր այդ կախաղան հանված ընկերները պարկանում էին Հնչակյան հայկական սոցիալիստական կուսակցությանը, որը հիմնաղրվել է 1885 թվականին և որն առաջին իսկ օրվանից մարքսիստական գաղղարներին է դավանում, կազմավորվելով որպես մարքսիստական կուսակցություն: 1905 թվականից այն կոչվեց Սոցիալ-դեմոկրատական կուսակցություն և 1905-ի հեղափոխությունից հերո այս պաշտոնական անվանումը օրենքով ճանաչվեց Թուրքիայի կողմից:

Կախաղան հանվածների մեջ է մարքսիստական «Կայծ»

Քերթի գրեթե ողջ խմբագրությունը, որի շուրջ համախմբվում էին Թուրքիայի մարքսիստական լավագույն փարբերը, Ժողովրդի մեջ լուրջ քարոզություն անելու նպատակով: Խմբագիրների մեջ իր գերազանցությամբ հայրկապես առանձնանում էր հրապարակախոս և փառանդավոր ճարտասան Գ. Վանիկյանը, քսաներկուամյա մի երիտասարդ, որը Կուրանդնուպոլսում վերջերս էր ավարտել իրավաբանության դասընթացը և պատրաստվում էր մեկնել Փարիզ կատարելագործվելու, երբ պայթեց Առաջին աշխարհամարտը²⁶:

Հողվածագիրը շարունակելով մեկնաբանել անկախ Հայաստանի հիմնադրմանը ձգտող քսան հայ հեղափոխականների սպանությունը, դատապարտում է գերմանացիներին, որոնք բացասական դեր են ունեցել իրադարձությունների առնչությամբ, նպաստելով, որ հայերին կախեն.

Գաղտնիք չէ, որ ներկայիս Թուրքիան հանդես է գալիս որպես պատերազմող Գերմանիայի գավառներից մեկը: Թե՛ Թուրքիայի կառավարությունը, թե՛ զորքն ու բանակը գերմանական հրամանատարության անմիջական ենթակայության տակ են: Հավելենք, որ մարշալ Ֆոն դեր Գոլց փաշան Սուլթանի դոկտրինա է և կարող է համարվել ամբողջ Թուրքիայի իրական գերիշխանը: Հերևաբար, Սուլթանի կողմից հաստատված մահվան դատապարտումը և քսան սոցիալիստներին կախելը չէին կարող տեղի ունենալ առանց պատերազմի գլուխ կանգնած գերմանացիների զիջության և թույլտվության²⁷:

Ըստ լրագրողի մեկնաբանության, հայերի համար սոցիալիստական դիրքորոշումը միակ հնարավոր և կենսունակ ճանա-

²⁶ “L’impiccagione di venti socialisti armeni in Turchia”, *Avanti!*, 16 agosto, 1915.

²⁷ Նույն տեղում:

պարհն է դեպի ազատություն և անկախություն, որը կարող է միայն ամրապնդվել խեղդելով թուրքական ճնշումները և Ռուսաստանի ընչաքաղց ձգտումները:

Միևնույն ժամանակահատվածում իտալական մամուլի ցուցաբերած առավել բուռն հետաքրքրությունը բացատրվում է նաև նրանով, որ այդ ընթացքում սկսում են Եվրոպա հասնել ականատեսների վկայություններ և հաղորդագրություններ²⁸: Որոշ թերթեր ստիպված են լինում վերանայել անցյալում ունեցած դիրքորոշումը, ինչպես 1878 թվականին Հռոմում հիմնադրված *Il Messaggero* թերթը, որը 1908 թվականից սկսած դրական կարծիք էր արտահայտել երիտթուրքերի շարժման մասին, իսկ այժմ Էնվեր-Թալեաթ-Ջեմալ միությունը սահմանում էր որպես խենթերի, կույրերի և բարբարոսների կառավարություն: Նույն *Il Messaggero* թերթը առանձնահատուկ կարևորություն կունենա հայկական կոտորածների լուսաբանման գործում, 1915 թվականի օգոստոսի 25-ի համարում տպագրելով Տրապիզոնում Իտալիայի գլխավոր հյուպատոս Ջակոմո Գորրինիի «Հայերի դեմ մահմեդական վայրագության սահմռկեցուցիչ դրվագներ» վերնագրով հարցազրույցը, որը հետագայում արտատպվել է այլ թերթերում²⁹: Այս հարցազրույցին, ինչպես նաև Գորրինիի հայանպաստ գործունեությանը կանդրադառնանք հաջորդ գլխում:

Իտալական մամուլն ուներ հակազերմանական դիրքորոշում, քանի որ Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ Իտալիան Անտանտի կազմում էր, մինչդեռ Գերմանիան՝ Կենտրոնական ուժերի, որին միացավ նաև Օսմանյան կայսրությունը: Ուստի գործ ունենալով թշնամի պետության հետ, իտալական մամուլը պետք է ըստ արժանվույն ներկայացներ իրավիճակի ծանրությունը:

²⁸ Տե՛ս հավելված 2:


²⁹ Այս հոդվածն արտատպվել է նաև Տորինոյի «Արմենիա» ամսօրյայի 1915 թվականի հոկտեմբերի 15-ի անդրամիկ համարում:

Մայիսի 19-ին *L'Idée Nationale* թերթը հրատարակում է հետևյալ հոդվածը.

Լուրեր են պրոպոլում, որ գորավար Լիման Ֆոն Սանդերսը³⁰ իր գլխավոր գորախմբի հետ տեղափոխվել է Անատոլիայի ափեր: [...] Հայաստանից լուրեր են հասնում, որ թալանում ու հրկիզում են հայերի տները³¹:

Եղան նաև այլ հրապարակումներ, որոնք անդրադառնում էին հայերի դեմ գերմանացիների իրականացրած գործողություններին:

Հուլիսի 26-ին *Il Resto del Carlino* թերթում հրապարակվում է մի ծանուցում թուրքերի և գերմանացիների փոխհարաբերությունների վերաբերյալ.



«Հայերի դեմ
հալածանքները»,
L'Idée Nationale,
19 մայիսի, 1915, էջ 5

³⁰ Գերմանացի գորավար Լիման Ֆոն Սանդերսը 1914 թվականից օսմանյան գործերի հրամանատարն էր, շարունակելով գերմանական մախորդ խորհրդականների՝ Մուրկեի, Ֆոն դեր Հուցի գործը: Էնվերը, կրած առաջին պարտություններից հետո, ստիպված եղավ նրան զիջելու ռազմական գործողությունների ողջ ղեկավարությունը: Պատերազմի ավարտին, 1919 թվականին Սանդերսին ձերբակալեցին Մալթայում ոճրագործություններ իրականացնելու համար, սակայն վեց ամիս անց ազատ արձակեցին (Aliprandi, 2009: 56, f. 36):

³¹ “Le persecuzioni contro gli Armeni”, *L'Idée Nationale*, 19 maggio, 1915, p. 5.

«Տանհին»-ի հողվածը թուրք-գերմանական հարաբերություններին վերաբերյալ

Յյուրիիս, 26 երեկո, - «Տանհին»-ը հրապարակում է «Գերմանիա և Թուրքիա» վերնագրով մի հողված՝ թուրք-գերմանական հարաբերությունների մասին: Սկզբում,- ըստ «Տանհին»-ի,- երկրթուրքերը չէին վստահում գերմանական քաղաքականությանը, սակայն հերոս համոզվեցին դրա արդյունավետության մեջ: Այժմ,- եզրակացնում է թուրքական լրագիրը,- հարակ է, որ պատերազմից հերոս Գերմանիայի և Թուրքիայի միջև եղած տնտեսական և ֆինանսական կապերը մի նոր բացառիկ զարգացում կունենան, իսկ քաղաքական հարաբերությունները կդառնան ավելի մերթիմ ու խորը:

Նեապոլում հրատարակվող *Il Mattino* թերթը տպագրեց «Թե ինչպես են բացատրում հայերի նոր կոտորածները թուրք-գերմանացիները» հողվածը, իսկ հուլիսի 27-ի *L' Idea Nazionale* թերթն իր հինգերորդ էջի «Մեր տեղեկությունները և վերջին հեռագրերը» բաժնում տպագրեց՝ «Հայերի բնաջնջումը թուրք-գերմանացիների կողմից» վերնագրով հետևյալ հողվածը.

Փարիզ, 26 [հուլիսի]

Կահիրեից սրացված մի հեռագիր նոր լույս է սփռում թուրքերի կողմից իրականացվող հայկական կոտորածների վերաբերյալ: Քանի որ Ձեյթունի բնակչությունն ապստամբել էր, թուրքերը նրանց դեմ երկու զորագունդ ուղարկեցին, որոնք սակայն ջախջախվեցին:

Հալեպում Գերմանիայի հյուպարոսը Ձեմալ փաշայի մի լեյտենանտի հերոս դիմեցին Կիլիկիայի կաթողիկեներին և հայ բողոքականների հովվին, խնդրելով նրանց միջամտությունը և խոստանալով, որ կիմայեն բոլորի կյանքը,

երի Չեթունը հանձնվի: Եվ Չեթունը հանձնվեց: Սակայն, հազիվ քաղաք մտնած՝ թուրքերը սկսեցին կոտորածները և քաղաքը հրի ու սրի մատնվեց: Հերոս Չեթունը ստիպված եղավ րեղի տալու:

Պատասխան - Ո՛չ, ամենևին: 1914 թվականի նոյեմբերի 10-ից, անողորքաբար ճնշվում էր իրալական, ինչպես նաև մյուս պետությունների թերթերի մուրքը, բացի գերմանական մամուլից: Մենք իմանում էինք միայն այն, ինչ հրատարակում էր տեղի օսմանական հեռագրային գործակալության տեղեկատվում, որն անդրադառնում էր միայն գերմանական, ավստրիական և թուրքական հաղթանակներին. օրական ոչնչացնում էին իրալական գորքն ու նավատորմը, հորինում էին ներքին հեղափոխություններ, սպափամբություններ և այլն:

Անողորք գրաքննությունն ու փոստային և հեռագրային համակարգված ճնշումներն էլ ավելի էին ծանրացնում մեր իրավիճակը [...] սակայն մենք հանդարտ էինք մնում և վստահություն տածում մեր Գերիշխանի, մեր Կառավարության լուսավոր իմաստության և մեր բանակի ու նավատորմի արժեքի հանդեպ: Անամոք հերյուրանք էինք համարում այդ բոլոր լուրերը, որոնց նպատակն էր ճնշել պատերազմող օտարականներին և պահպանել մահմեդական ժողովուրդների ու զինվորների մոտ արդեն իսկ շար ցածր հայրենասիրական ոգևորությունը:

Մենք կարծես աշխարհից կտրված լինեինք, ամեն ինչից անտեղյակ, այն աստիճան, որ երբ հասա Կոստանդնուպոլիս, հանդիպածս առաջին իսկ բարեկամին ինդրեցի ինչ ամփոփ պարմել մեր ու միջազգային իրավիճակը:

Հարց - Վերադառնա՞նք Չեր մեկնելու պատրաստություններին:

Պատասխան - Օսմանական կայսրությունում բոլոր հյուպատոսների համեմատ, ես առավել վրանգի մեջ էի, փակված Բոսֆորի և ռուսական սահմանի միջև, որոնք երկուսն էլ ականապարված էին և ամրապնդված, և անչնական ուժերով անհասանելի:

Ծովում ու ցամաքում մղվող պատերազմի սրտում էի, այնպիսի մի տեղանքում, որը թուրքերի կողմից հայտարարված էր մշտական շրջափակման մեջ, ուստի իստորեն հսկվում էր: Փոխադրամիջոցներ չկային, արդեն ամիսներ էր, ինչ շոգենավերն այլևս չէին գալիս, այսինքն այն պահից, երբ ռուսական նավատորմը մաքսանենգությունը կասեցնելու նպատակով սկսել էր անողորքաբար ոչնչացնել փոխադրման բոլոր միջոցները, շոգենավերը, առագաստանավերն ու նավակները: Մնացած չնչին միջոցները չէին կարող գործածվել առանց քաղաքացիական և զինվորական հեղինակությունների նախօրոք թույլտվության: Արտոնությունը ստանալուց հետո հարկավոր էր համոզել նավաստիներին ու նավավարներին և դիմագրավել հաճախակի ծովարշավող ռուսական նավերի թնդանոթների հարվածները, որոնք ոչ մի դրո-

շի հանդեպ չեզոք վերաբերմունք չունեին: Քանի-քանի նավերի՝ մեծ, փոքր, չնչին, ցանկացած դրոշով, միևնույն անողորքությանը հարվածեցին, սակայն մշտապես հոգ էին փսնում փրկել նավաբեկյալներին: Թուրքական հեղինակություններն իմ մեկնման թույլտվությունը հանձնեցին Գերագույն Դռան արտոնությանը, և այն պայմանով, որ ես գրեմ փոխադրամիջոցը, որոշ ապահովության երաշխիքով, այսինքն, իմ լիակատար պատասխանատվությամբ: Իսկապես անլուծելի խնդիր էր: Խորապես գիրակցում էի, որ դեպքերը սրընթաց զարգանում էին, և որ հարկավոր էր շտապել, շտապել, որպեսզի խուսափեի կես-ճանապարհին կամ ճամփորդությանս ավարտին մտր՝ այսինքն նախքան մայրաքաղաք հասնելը, չերբակալվելուց: Երկար խորհելուց հետո բացառեցի ինձ առաջարկվող ուղին, այն էր՝ հասնել Սամսուն նավակով կամ առազաստանավով, այնպեղից չիով կամ փոխադրամիջոցով ներքին ճանապարհներով անցնել Սվաս-Անգորա-Կոստանդնուպոլիս: Մի ամբողջ ամիս կրկեր, այսինքն, հավանաբար, ժամանակին չէի հասցնի: Բացի դրանից, առաջարկվող ճանապարհն այդ պահին վրանգավոր էր և գրեթե փակ, քանի որ այնպեղով էին անցնում աքսորվող հայերի խմբերը, քանի որ այն հաճախակի ասպարակվում էր ավազակախմբերի կողմից և բռնկված էր փիֆի ու ծաղկախրի սաստիկ համաճարակներով: Անհրաժեշտությունից ելնելով բացառեցի Ռուսաստանի ճանապարհը, որն ամենամտրն էր, քանի որ խստորեն այն արգելվեց օսմանական հեղինակությունների կողմից: Բացառեցի նաև Ռումինիայի ճանապարհը, քանի որ ափից հեռու, այսինքն բաց ծովով ընթանալու համար հարկավոր էր կամ շոգենավ, կամ լավ առազաստանավ, որոնք երկուսն էլ իրականում գոյություն չունեին: Այրևորանք չունեի, քան մի փոքր նավով անցնել Սև ծովն ու Բոսֆորը և հասնել ուղիղ Կոստանդնուպոլիս: Ծայրաստիճան վրանգավոր մի շեռնարկ, քանի որ գիրեցողները քաջարեղյակ են առաջինի հաճախակի և սաստիկ մրրիկներին ու երկրորդի հոսանքների և քամիների ուժգնությամբ:

Հարց - Այսպիսով, ծովային ու ցամաքային երկու վրանգների միջև Դուք ընդերեցիք առաջի՞նք, որն առավել վրանգավոր էր:

Պատասխան - Այո, գերադասեցի Սև ծովը, քանի որ զոնե այն ամենաարագ ուղին էր: Ամեն դեպքում, լավ է խեղդվել, քան արգելափակվել, այսինքն վառապանքներով ու զրկանքներով լի դանդաղ մահվան բաժին դառնալ: Փորձությունը հաղթահարելու մեծ վարահույժուն ունեի: Լազարանի մի առազաստանով վարձեցի, երեք փոննա փարողութամբ, անունը՝ «Ադրիանոպոլի», քարյուղի փոքր շարժիչով, առազաստաներով ու թիերով: Այն վարձեցի միայն իմ և իմ երեք սպասավորների համար, որոնցից մեկը մեր պաշտպանության փակ գրնվող զարստաղցի քավաս էր⁴³: Սահմանեցի դեպի մայրաքաղաք փանող ուղին, առանց միջանկյալ կանգառների, հսրակեցրեցի բոլոր պարագաներն ու պայմանները: Խնամքով ախրահանեցի նավը, նավ վերցրեցի շարժիչով առազաստանավի փրիորջը, Օսման բեյին, չորս նավաստիների և մի մեքենավարի, բոլորը լազ: Բարձեցիկնք մի սնդուկ, ճանապարհորդական երկու ներքնակ, իմ, սպասավորներիս ու նավաստիների փոքրաթիվ ճամպրուկները, շարժիչի համար վաթսուն թիթեղաման քարյուղ, հայթայթած սակավ միջոցները՝ թիթեղամանով սարդին շուկ և պահածոներ, հսրկապես այն նպատակով, որ եթե

⁴³ Գործիմի հետ Տրապիզոնից Կոստանդնուպոլիս մեկնելուց հետո օսմանյան բանկում աշխատող այս գարատաղցի քավասը հասնում է Կահիրե և վկայում հետևյալը. «Կ.Պոլսից հրամանը գալու առաջին գիշերը 40-ի չափ ծանոթ կուսակցականների և մտավորականների ծովը նետեցին, ասելով՝ ծովի ճանապարհով պիտի արտրվեք: Տրապիզոնում հայ չմնաց, բացի օսմանյան բանկի երկու աշխատակիցներից, որոնք ևս պիտի տարագրվեին, երբ Կ.Պոլսից իրենց փոխարինողներ գային: Փոքրիկները մահմեդականացված և մահմեդական ընտանիքներին են հանձնված: Ով լալիս է կամ դիմադրում՝ սրախողտող է լինում: Հայերի մեկնելուց հետո նրանց տները բռնագրավվեցին: Գործի գլուխ կանգնած էր [Սիւրբյուն և առաջընթաց] Կոմիտեն: Տարագրվողներին թույլ չտվեցին ո՛չ դրամ, ո՛չ հագուստ և ո՛չ էլ ուտելիք վերցնել: 500 հայ զինվորներ ևս զինաբաժնվելուց հետո տարագրվել են և ճանապարհին կոտորվել: [...] Դեյլիմենի գետն օրական դեպի ծովն է բշել խոշտանգված, ամբողջովին մերկ դիակներ, իսկ կանանց կրծքերը կտրված են եղել»: Ամբողջական հողվածը տես «Տրապիզոնի հայոց վերջին օրերը. իտալ. հիւպատոս Պ. Կորրիմի մեկ նոր նամակը. - Անտելի հրէշտիւններ», Արեւ, թ. 63, Ալեքսանդրիա, հոկտեմբերի 1, 1915:

նավաբեկության ենթարկվեինք որևէ ամառի ժայռի վրա:

Եվ հուլիսի 23-ի առավոտյան ժամը 5-ին վալիի⁴⁴ ուղարկած քիկնապահների զինվորական հրաժեշտից հետո մեկնեցինք Տրապիզոնից: Սիրոս ուժգին բաբախում էր: Օսմանական սահմանադրության փարեդարչն էր, սակայն ես ինչ հետ փանում էի Իդալիայի դրոշը, որը ճամփորդության ընթացքում բազմիցս դրեցի նավի վրա: Շատ երկար կլիների, եթե պատմեմ ճանապարհի արկածներն ու դրվագները: Հակիրճ ամփոփեմ, ասելով, որ կարճապես դադարներով յոթ օր ու վեց գիշեր շարունակաբար ընթացանք, փոխադարձաբար գործածելով շարժիչը, առազաստն ու քիերը, երբեմն էլ միավորելով փեղաշարժվելու բոլոր երեք միջոցները: Միշտ ծովեզերքով էինք ընթանում, ասից երեսունից երեք հարյուր մետր հեռավորությամբ: [...] Տրապիզոնից մեկնելիս ծովը ալեկոծված էր, իսկ քամին փչում էր հսկառակ ուղղությամբ: Ուրբաթ էր, եղան սևուրիապաշտներ, որոնք թախամնչեցին, որ հեփազեի ճամփորդությունն մեկ օրով: Մեկ ժամ անց, Կապո Յորոսում, վրա հասավ ալիքների ու քամու ուժգին փոթորիկը, որը յոթ օրվա ընթացքում մեզ հինգ ու կես օր անդադար ընկերակցեց ու չարչարեց:

Առաջին օրվա՝ այսինքն 23-ի գիշերը, սրիպված եղանք խարիսխ գցել և պատրաստվել Վոնայում, և նավաբեկման ենթարկվելու մեծ վրանգ ունեցանք: Վարսահ չէինք, եթե ճիշտ էր այնպեղ մնալ մինչև ծովի սասարկության փոքր-ինչ մեղմելը: Սակայն երեք ժամ անց քաջալերեցի անչնակազմին վերսկսելու նավարկությունը: Առազաստրանավը քիչ էր բարձրված, ուստի անկանոն պարում էր ու ցարկոտում վրանգավոր ալիքների վրա: Երբ հնարավոր եղավ, այսինքն՝ Բներթում, խոշոր քարերի ամուր իմնավազ բարձեցինք, որպեսզի հակակշռենք Բոսֆորից եկող հոսանքի ուժգնությունը:

Երբեք ցամաք դուրս չեկանք: Յոթ օր սպրեցինք պահածո

⁴⁴ Վալի - իսլամական երկրներում համապատասխանում է վարչական միավորի մարզպետի պաշտոնին:

ուրելով: Ինչ և սպասավորներինս վերապահված փարածքը մեկ քառակուսի մետրից ավելի չէր: Լավագույն դեպքում հերթով էինք պահուում, քայց ես գրեթե երբեք չքնեցի: Կառչում էի առազաստանավի կայսից, որպեսզի սաստիկ քամին ինչ ծովը չնետեր, կամ նստում սնդուկի կամ էլ «Ադրիանոպոլի» եզրին և հեռադիտակով մշտապես մանրակրկիտ զննում էի ափը և ավազակույրերը, որ բազմաթիվ գետեր առաջացնում էին ծովի մեջ թափվելիս, որպեսզի խույս փայինք ավազի մեջ խրվելուց կամ ժամանակին չլրեսնելու հետևանքով ժայռերին հարվածվելուց, կամ զննում էի հեռավոր հորիզոնը՝ նշմարելու համար ռուսական պատերազմական նավերը, որպեսզի տեղեկացնեի նավաստիներին: Եվ իրոք, նրանց հանդիպեցինք 24-ի առավոտյան ժամը 4-ին Սամսունի ճանապարհին, կազմված էին փասը միավորից, և իրենց երևից քարշ էին փախի մեր առազաստանավից փոքր-ինչ ավելի մեծ առազաստանավերի, որոնք բռնագրավել էին: Կարողացանք խույս փախ... Եվս երկու անգամ նրանց նկատեցինք և խույս փակեցինք Չոնգուլդակից հետո և Բոսֆորի մոտ, և երկու անգամ հանդիպեցինք թուրքական ութաշիգ նավի ...

Հինգ ու կես օր շարունակ հանձնված էինք ալիքներին ու քամուն, կյանքի ու մահվան միջև: Բոլորս մշտապես քրջված էինք ուրբից գլուխ, քանի որ ալիքները ջուրը շփում էին մեր շարժչով առազաստանավի մեջ, և հնարավորություն չունեինք մեր հագուստներն ու սպիրակեղենը փոխելու: Բարեբախտաբար արևը ծագում էր առավոտյան ժամը 4-ին և մայր էր մտնում երեկոյան յոթն անց կեսին, և այն սաստիճան կիզիչ էր, որ արևի ու ծովի քամու հետևանքով դեմքից ամբողջ կաշին լորտուի նման փոխեցի:

Անարողայի փարոսի մոտ զինվորական հեղինակությունը մեզ պահեց մինչև նավաքարշի հասնելը, որը մեզ ապահով ուղեկցեց Բոսֆորի շափազանց առատ սկանների միջով: Երբ դուրս եկանք սկանապարտված գոտուց, մեզ ազատ արձակեց: Այդժամ փոքրիկ «Ադրիանոպոլի» սահեց Բոսֆորի նեղուցով, բազմաթիվ պատերազմական և առևտրական նավերի, այսինքն ծովի հսկա-

ների միջով, առաջացնելով թերահավասար հիացմունքն այն բոլորի, ովքեր մեզ հարցուփորոջ էին անում և պարզում, որ ուղիղ ճանապարհով և առանց դադարի գալիս էինք հեռավոր Տրապիզոնից: Հուլիսի 29-ին ժամը 18-ին, այսինքն յոթն օր անընդմեջ նավարկությունից հետո մոտեցանք Գալաթայի մաքսատանը, ուղղակի «quai»-ին⁴⁵ և ողջ-առողջ ափ իջանք, բայց բոլորս այնպես կարկամած էինք ու շնամծ, կարծես արթնացած լինեինք քնի ու րենդի զառանցանքից:

Ընդամենը երկու օր մնացի Կոստանդնուպոլսում, բայց չկարողացա հանգստանալ, իսկ օգոստոսի մեկի առավոտյան արդեն գնացքի մեջ էի, որը պարերազմական իրավիճակին բնորոշ ժամանումների ու մեկնումների բոլոր փառարկությունների ու նեղությունների միջով Օսմանյան կայսրության մայրաքաղաքից հերթական սահմանները հասրելով ամսի երկուսի առավոտյան ժամը 4-ին ինչ հասցրեց բուլղարական փարածք, Դեդեգաչ, որտեղ սրիպված եղա մնալ բավականին օրեր, մինչև որ մեր «Romania»-ն Սալոնիկն ու Պիրեոն անցնելով ինչ բերեց Պալերմո, սպա Նեասպոլ: Ամսի 19-ին կեսգիշերից քիչ առաջ Հռոմում էի, իմ ճամփորդության վերջնակետում:

Հարց - Թույլ րվեր մեկ հարց այլ թեմայի շուրջ. ո՞րն է Օսմանյան կայսրության ներքին իրավիճակն այսօր:

Պատասխան - Կպարասիսանեմ միայն իմ իրավասության փակ եղած երկրամասի համար, այսինքն Սև ծովի եզերքին չզվող և Մերչավոր Ասիայի արևելյան ներքին շրջանների համար: Իրավիճակը գրեթե հուսահատեցնող է... Բայց մահմեդական ու քրիստոնյա բնակչությունն այլևս չի կարող փանել: Հասել է ծայրակետին: Թքվածինը մատակարարում են գերմանացիները, որոնք փորձում են երկարացնել մեռնող Կայսրության հոգեվարքը, բայց չեն կարողանա դիակլին վերակենդանացնելու հրաշքը գործել: Մի քանի խելակորույսներից բացի, բոլորը շուրափույթ խաղա-

⁴⁵ quai - ֆր. ծովապատնեշ, ալեհատ:

դություն են թախանձում, լինի՛ նույնիսկ օտար Կիրասպետության Կրակ հայրենիքը զնով: Ապարանքելու իրզատություն չկա, բայց բոլորն ապրում են ու զարչում գերմանացիներից ու «Միություն և առաջադիմություն» կուսակցությունից, սակայն միայն իրենց սր- Կրի խորքում ու իրար գաղբնի զրույցների ժամանակ: Գերմա- նացիներն ու կուսակցությունը հանդիսանում են Թուրքիայում գոյություն ունեցող միակ և ամուր կազմակերպությունը. վարպեր կազմակերպություն է, չափազանց սերտ, որը ոչ մի զինամիջոցի դեմ չի կանգնում. հանդգնության, ահաբեկության և զազանային թաքնված վրիժառության կազմակերպություն:



Հարված «Հայերի դեմ մահմեդական վայրագության սահմնիկցուցիչ դրվագներ» հոդվածից

Հարց - Խնդրում եմ պարզաբանել մի վերջին կետ. որքանո՞վ են իրականությանը համապատասխանում Օսմանյան կայսրու- Բյունում հայերի դեմ իրականացվող հալածանքներին վերաբե- րող հրապարակումները:

Պատասխան - Տարբեր վիլայեթներում հայերին տարբեր կերպ էին վերաբերվում: Ամենուր հետապնդվելով ու կասկածվե- լով, այսպես սասած հայկական վիլայեթներում նրանք իսկական սպանդի ենթարկվեցին, որն ավելի դաժան է, քան կոտորածը: Վիլայեթներից հինգը՝ (վիլայեթներն ընդամենը յոթն են) Տրապի- զոնը, Էրզրումը, Վանը, Բիթլիսը և Սվասը, ամենակարևորներն ու մարդաշատը, դժբախտաբար հենց իմ հյուպատոսական իրա- վասության Կրակ էին գրնվում: Իմ երկրամասում, սկսած հունի-

սի 24-ից, բոլոր հայերին սկսեցին տեղահանել՝ բռնի դուրս էին մղում իրենց բնակավայրերից և ուրիկանների ուղեկցությամբ տանում դեպի հեռավոր, բայց անհայր նշանակետեր: Նրանցից միայն քչերն էին հասնում Միջագետք, իսկ մեծ մասը սպանվում էր ջլաված դաժանությամբ:

Տեղահանման հանդիսավոր կոչը գալիս էր հենց Կ. Պոլսից. սա կենտրոնական իշխանության և «Միություն և առաջադիմություն» կուսակցության գործն էր: Տեղական իշխանությունները և նույնիսկ մահմեդական բնակչությունը փորձում էին դիմադրել, մեղմացնել, ազարել, բարքնել հայերին, սակայն ամեն ինչ սպարդյուն էր: Կենտրոնական իշխանության հրամանները կիրականապես հաստատված էին, բոլորը պետք է ենթարկվեին ու հերկեին դրանց:



Հարված «Հայերի դեմ
մահմեդական վայրագության
սահմնչեցուցիչ դրվագներ»
հոդվածից

Մեր հյուպարոսական միջնորդությունը փորձեց փրկել գոնե երեխաներին և կանանց: Սրացանք բազմաթիվ խուսրումներ, որոնք, սակայն, հերազայում չհարգվեցին «Միություն և առաջադիմություն» կուսակցության րեդական մարմինների միջամտության և Կ. Պոլսից եկող հրամանների պարճառով:

Ամենեղների իսկական կոտորած ու ջարդ եղավ, չլսված մի դեպք, մի սև էջ, մարդասիրության, քրիստոնեության և ազգային պարկանելության ամենասուրբ իրավունքների բացահայտ խախտումով: Նույնիսկ հայ կաթողիկեները, որոնց նախկինում միջր հարգել էին և խնայել կոտորածներից ու հալածանքներից, այս անգամ, դարձյալ կենրորոնի հրամաններով, հալածվեցին բոլորից դաժան ձևերով:

Տրապիզոնում բնակվող լուսավորչական, կաթողիկե և բողոքական շուրջ 14.000 հայերից, որոնք երբևէ չէին հրահրել անօրինություններ, երբևէ չէին նախագոռչացվել ուրիկանության կողմից, իմ մեկնելու ժամանակ նրանց թիվը նույնիսկ հարյուրի էր հասնում: Հունիսի 24-ից՝ այդ ամոթալի հրամանագրի հրապարակման օրից մինչև հուլիսի 23-ը՝ Տրապիզոնից իմ հեռանալու օրը, ես այլևս չէի քնել, չէի կերել, գրնվում էի ջղագրգիռ վիճակում, սրտխառնոց ունեի, այնպիսի տառապանք էր ներկա գրնվել անգեև և անմեղ արարածների գանգվածային բնաջնջմանը:

Հյուպարոսության պարուհանների տակով անցնող հայերի խմբեր, օգնության աղերսներ. բայց ո՛չ ես, ո՛չ մյուսները ոչինչ չէինք կարող անել նրանց համար, քանի որ քաղաքը պաշարված էր 15.000 զինվորներով, ուրիկանության հագարավոր աշխատակիցներով, կամավորների խմբերով, «Միություն և առաջադիմություն» կուսակցության անդամներով: Արցունք, կսկիծ, անեծք, հուսահատություն, բագում ինքնասպանություններ, վախից մեռնողներ, հանկարծակի խելագարություն, հրդեհներ, կրակոցներ, դաժան հերապնդումներ տներում ու գյուղերում, փողոցներում օրական հարյուրավոր դիակներ, բռնի մահմեդականացված կամ մյուսների հեր տարագրված կանայք, ընրանիքներից ու քրիս-

յրոնեական դպրոցներից գողացված ու մահմեդական բնրանիքներին հանձնված երեխաներ, իսկ հարյուրավորներին էլ միայն մի շապիկով նսրեցնում էին նապակների մեջ ու շրջում, խեղդում Սև ծովում կամ Դերե Մենդերե գետում: Սիստրապոլիսից հեռավոր Սև ծովում կամ Դերե Մենդերե գետում: Սիստրապոլիսից հեռավոր Սև ծովում կամ Դերե Մենդերե գետում: Սիստրապոլիսից հեռավոր Սև ծովում կամ Դերե Մենդերե գետում: Սիստրապոլիսից հեռավոր Սև ծովում կամ Դերե Մենդերե գետում:

cento].
 Dal 21 giugno, giorno della pubblicazione dell'infame decreto, fino al 21 luglio, giorno della mia partenza da Trebisonda, io non avevo dormito, io non avevo mangiato più, ero in preda al nervi, alla nausea, tant'era stato lo strazio di dover assistere ad una esecuzione in massa di creature inerme, innocenti.
 Il passaggio delle squadre degli eretici sotto le finestre e davanti la porta del Consolato, le loro invocazioni al soccorso senza che né io né altri potessimo fare nulla per loro, la città essendo in stato d'assedio, guardata in ogni punto da 15 mila soldati in pieno assetto di guerra, da migliaia di agenti di polizia, dalle bande dei volontari e dagli addetti del Comitato Unione e Progresso; i pianti, le lagrime, le desolazioni, le imprecazioni, i numerosi suicidi, le morti subitanee per lo spavento, gli impazzimenti improvvisi, gli incendi, le fucilate in città, la caccia spietata nelle case e nelle campagne; i cadaveri a centinaia trovati ogni giorno sulla strada dell'internamento, le giovani donne ridotte a forza musulmane o internate come tutti gli altri, i bambini strappati alle loro famiglie o alle scuole cristiane e affidati per forza alle famiglie musulmane, ovvero posti a centinaia sulle barche con la sola cannicia, poi capovolti e affogati nel Mar Nero o del fiume Dere-Mendero, sono gli ultimi incancellabili ricordi di Trebisonda, ricordi che, ancora a un mese di distanza, mi straziano l'anima, mi fanno fremere. Quando si è dovuto assistere per un intero mese a simili orrori, a torture così prolungate, nell'assoluta impotenza di agire come avrei voluto, viene spontanea, naturale la domanda se tutti i cannibali e se tutte le belve feroci abbiano risolato i loro recessi e nascondigli o le foreste vergini dell'Africa, Asia, America ed Oceania per darsi convegno a Stambul!

Հարված «Հայերի դեմ մահմեդական վայրագության սահմունկեցուցիչ դրվագներ» հոդվածից

Երբ սրիպված ես լինում մեկ ամիս շարունակ սկանսարես լինել նման սարսափելի դեպքերի, այդքան երկարաշգվող տառապանքների, միանգամայն անգոր գործելու այնպես, ինչպես կկամենայիր, անմիջապես մի բնական հարց է ծագում, թե արդյոք

Աֆրիկայի, Ասիայի, Ամերիկայի և Օվկեանիայի բոլոր մարդա-
կերներն ու վայրագ զազանները չե՞ն թողել իրենց թաքսիտներն
ու կուսական անկախները, որպեսզի հավաքույթ կազմակերպեն
Սրամբուլում: Թույլ տվեք այսքանով եզրափակել իմ այս գրույցը
և հայտարարել, որ Թուրքիայի այս սև էջը արժանի է ողջ Բրիտո-
նյա աշխարհի կողմից դատապարտման ու վրեժի: Եթե իմանան
այն ամենը, ինչ ես գիտեմ, այն ամենը, ինչ տեսել եմ իմ աչքերով
ու լսել իմ ականջներով, այն բոլոր քրիստոնյա պետությունները,
որոնք մինչ այժմ չեզոք դիրքում են, պետք է որ ելնեն Թուրքիայի
դեմ, անեծք թափեն նրա անբաղաճակիք իշխանության, նրա
վայրագ «Միություն և առաջադիմություն» կուսակցության գլխին
և պարասիսանարիության կանչեն նրա դաշնակիցներին, որոնք
հանդուրժում և իրենց օգնությամբ թաքցնում են այն զարշելի ոճ-
րագործությունները, որոնց համարժեքը չկա ոչ հին, ոչ էլ նոր աշ-
խարհի պարմության մեջ: Նախարհ՛նք, սարսա՛փ, ամո՛թ⁴⁶:

Permetta anzi che io chiuda a questo punto il mio colloquio, e che dichiaro che questa pagina nera della Turchia merita la più risoluta riprovazione e la vendetta della intera Cristianità. Se sapessero tutte le cose che so io, tutto quello che ho dovuto vedere co' miei occhi e udire co' miei orecchi, tutte le potenze cristiane ancora neutrali dovrebbero sollevarsi contro la Turchia, gridare anatema al suo incivile governo e al feroce suo Comitato Unione e Progresso e ritenere responsabili anche gli alleati che tollerano o coprono col loro aiuto delitti esecranda che non hanno l'eguale nella storia antica nè moderna. Onta, orrore, obbrobrio!

Հարված «Հայերի դեմ մահմեդական վայրագության սահմոնկեցուցիչ դրվագներ» հոդվածից

⁴⁶ Orrendi episodi di ferocia musulmana contro gli armeni, Il Messaggero, 25 agosto 1915.

Այս հոդվածն արտատպվեց իտալական մյուս թերթերում, ինչպես նաև Ֆրանսիայի, Անգլիայի և Ամերիկայի գլխավոր լրագրերում:

ARMENIA

La tragedia armena

I massacri di Trebisonda

Riassunto del dramma armeno. Attribuito a T. Zoraghi. Traduzione di G. L. Villari della Città di Roma.

Quando i russi entrarono a Trebisonda non vi erano che 15.000 abitanti quasi tutti greci. E tanti erano fuggiti dall'Asia. Quanto agli armeni, essi erano stati quasi tutti massacrati nel lungo viaggio. I soli sopravvissuti di questo terribile marcia erano qualche centinaio di ragazzi e loro le loro famiglie rimasti che per sottrarsi al massacro dovettero fare una guerriglia.

Gli armeni nei villaggi del circondario hanno subito la medesima sorte. Le atrocità di cui gli armeni di questa regione furono vittime superano in orrore tutte quelle commesse altrove. Le deportazioni dei greci, del massacro intenzionale d'una città, l'impedimento d'un allegero della città, di qualche migliaio uccisi, di due anni di esilio, di alcuni bambini che furono la vittima della epidemia di Trebisonda sono terribili memorie, si possono anche scoprire negli archivi l'ordine quadro di questi massacri.

E così luglio 1912 che si aveva notizia in Trebisonda la deportazione degli armeni.

Secondo gli atti i turci organizzarono più giorni per i deportati alle prigioni. Fin dal primo giorno essi venivano

1
2
3
4
5
6
7
8
9
10
11
12
13
14
15
16
17
18
19
20
21
22
23
24
25
26
27
28
29
30
31
32
33
34
35
36
37
38
39
40
41
42
43
44
45
46
47
48
49
50
51
52
53
54
55
56
57
58
59
60
61
62
63
64
65
66
67
68
69
70
71
72
73
74
75
76
77
78
79
80
81
82
83
84
85
86
87
88
89
90
91
92
93
94
95
96
97
98
99
100



Una donna armena che col figlio alle mani scappa dal suo paese.

«Հայոց ողբերգությունը.
Տրասպիզոնի ջարդերը»,
Armenia, h. 8, 1916, էջ 6

Պատերազմի ավարտից հետո Գորրիհնին հանձնարարություն ստացավ մի ուսումնասիրություն պատրաստել Հայաստանի վերաբերյալ: Եվ ահա 1918 թ. նոյեմբերի 14-ին Գորրիհնին Խաղաղության կոնգրեսում իտալական պատվիրակությանը ներկայացրեց մի «Հուշագիր», որը նաև մեկնարկային կետ կհանդիսանար Լոզանի, Ժնևի, Սևրի քննարկումների համար:

1920 թվականին Գորրիհնին կարճատև այցով վերադառնում է Տրասպիզոն ամփոփելու իր հյուպատոսական գործունեությունը, որն այնքան հանկարծակի ընդհատվել էր հինգ տարի առաջ:

Իտալիա վերադարձին տեղեկանում է, որ նշանակվել է Հայաստանի առաջին Հանրապետությունում դեսպան: Քաղաքական դեպքերի հետևանքով կարողանում է Երևան մեկնել միայն 1921 թվականի ապրիլի 18-ին, սակայն երկու ամիս անց ստիպած է լինում վերադառնալ Հոմ⁴⁷: Գորրիինին Երևանից Իտալիա վերադարձավ Բաբերդի ջարդերի վերապրյալ Սոնա Եղիայան անունով մի հայ կնոջ հետ, որը մինչև իտալացի դիվանագետի կյանքի վերջը, մնաց նրա կողքին:

1923 թվականին առողջական խնդիրների հետևանքով Գորրիինին պաշտոնապես հեռանում է դիվանագիտական գործունեությունից, շարունակելով, սակայն, համագործակցել Արտաքին գործոց նախարարության հետ:

1940 թվականին, երբ աշխարհը ցնցվում էր Երկրորդ համաշխարհային պատերազմի աղետից, Գորրիինին հրատարակում է հայկական հարցի վերաբերյալ *Testimonianze* [Վկայություններ] վերնագրով իր ուսումնասիրությունը, այս կերպ ստանձնելով իր իսկ բառերով ասած «տարիների անխնա լուրջությունը» կոտրելու առաքելությունը, ցույց տալով, որ շարունակում էր իր լուռ գրույցը ցեղասպանության զոհերի հետ: Գորրիինին այն համոզման էր, որ միջազգային արդարադատությունը վաղ թե ուշ կճանաչի, որ հայերը դարձել են մռռացված ու ժխտված ցեղասպանության զոհ⁴⁸:

⁴⁷ Micheletta (2002).

⁴⁸ 1950 թ. հոկտեմբերի 31-ին, 91 տարեկան հասակում, Ջակոմո Գորրիինին մահացավ Հոմում: 2001 թվականի մայիսի 25-ին նրա շիրմից հող է թաղվել Ծիծեռնակաբերդի պատվո հուշապատի մեջ: 2010 թ. ապրիլի 12-ին Միլանի «Աշխարհի արդարների այգում» տնկել են մի ծառ ու տեղադրել մի հուշարձան նվիրված Ջակոմո Գորրիինիի հիշատակին: Ջակոմո Գորրիինիի մասին առավել մամբամասն ուսումնասիրությունների համար տե՛ս. Roma, Archivio centrale dello stato, *Carte Gorrini*, bb. 1-5; *Carte Pisani Dossi*, bb. 6, 8; *Ibid.*, Archivio storico del Ministero degli Affari esteri, *Personale Concorsi*, bb. 1, 14; *Personale IG*, 36, *G. Gorrini*; Serie D (Direzione dell'Archivio storico); *Segreteria del III Congresso internazionale di scienze storiche*. Տե՛ս նաև *Corriere diplomatico e consolare* (Roma), 20 sett. 1923; *Disciplina* (Voghera), 19 ag. 1925; *Moscato* (1953); *Sidari* (1962); *Lodolini* (1985); *Ruggeri* (1988; 1989: 250-265, 404-430); *Kuciukian* (2000: 79-101):

Գլուխ Գ «Արմենիա» ամսագիրը

1915 թվականին, Տորինոյում, մի խումբ նվիրյալ հայերի և իտալացիների շնորհիվ, ծնունդ է առնում «Արմենիա» ամսագիրը⁴⁹: Բոլոր համարների առաջին էջին զետեղված է Մեծ Բրիտանիայի վարչապետ Ուիլիամ Յուարթ Գլադստոնի *To serve Armenia is to serve the Civilization*⁵⁰ թևավոր արտահայտությունը՝ իտալերեն թարգմանությամբ՝ *Servire l'Armenia è servire la civiltà*.

Ամսագրի հիմնադիրը Նշան Տեր-Ստեփանյանն է, սակայն որոշ աղբյուրների համաձայն նա երբեք ի հայտ չի եկել իբրև հիմնադիր, ստորագրելով շատ խմբագրականներ ծածկանուններով⁵¹:

Նվիրյալ հայերից շատերի անունը հայտնի չէ, մինչդեռ հայտնի են այն իտալացիների անունները, ովքեր սատարել են ամսագրին, այդ թվում պատվավոր խմբագիր, Տորինոյի համալսարանի պրոֆեսոր, արվեստաբան Կոռադո Կոռադինոն և Կառլո Մարգարիան, որոնց գործունեությանն իրենց հերթին օժանդակում էին իտալական մշակույթի ժամանակի հայտնի դեմքեր, բանաստեղծ և արձակագիր Ադրիանո Ջիմոռոին, *L'Eroica* ամսագրի հիմնադիր

⁴⁹ Հայտնում ենք մեր խորին շնորհակալությունը Տորինոյի Իտալական վերածննդի ազգային թանգարանի գրադարանի աշխատակից տիկին Էդի Պերինոյին՝ «Արմենիա» ամսագրի նյութերը տրամադրելու համար: Un ringraziamento particolare alla dott.ssa Edi Perino della Biblioteca del Museo Nazionale del Risorgimento Italiano per aver messo a disposizione i fascicoli della rivista “Armenia”.

⁵⁰ Seth (2005: 91).

⁵¹ Manoukian (2014: 37-40).

և խմբագիր Էտտորե Կոցցանին, գրող, հասարակական գործիչ, *Impronta* տպարանի տնօրեն Տերենցիո Գրանդին և իտալերենի ու սլավոնական գրականության դասախոս, հետագայում մի քանի գրադարանների տնօրեն Դոմենիկո Չամպոլին: Վերջիններս իրենց գործուն մասնակցությունն էին բերում ամսագրին, պատրաստելով նյութեր հայերի դեմ գործադրվող վայրագությունների վերաբերյալ, գորակցելով հայերի անկախության գաղափարներին և հայտնելով իրենց բացարձակ ընդդիմությունը թե՛ թուրքերին և թե՛ գերմանացիներին, որոնք այդ տարիներին Իտալիայի բացահայտ թշնամիներն էին, բազմիցս մեղադրելով նրանց հայերի կոտորածների մեջ մասնակցություն ունենալու համար:

ARMENIA

3

La tragedia armena

Armenia turca e Anatolia

Lugano, 21 sett. — Si vende carne umana! — I giornali svizzeri pubblicano:

« La vita è intollerabile a Costantinopoli. La città è interamente caduta nelle mani dei tedeschi, con grande malcontento dei turchi. I cristiani di tutte le nazionalità, tranne quelli tedeschi, sono stati disarmati. Complessivamente, a Costantinopoli regna il regime del terrore. Intanto la vita diventa ogni giorno più cara. Non vi sono più né gas, né elettricità, né candele. La carne umana, invece, si può ottenere ad un prezzo discreto. La polizia vende in pieno mercato, ma soltanto ai turchi, orfani armeni dei due sessi, per il prezzo da otto a dodici franchi. Le giovinette nubili si vendono un po' più care... » (Stampa).

Londra, 1 ottobre. — I Consoli tedeschi dirigono! — Il Times ha dal Cairo che molti Consoli tedeschi diressero ed incoraggiarono i massacri degli armeni, e specialmente Rosler, console di Aleppo, che si recò ad Aintab per dirigere personalmente i massacri. (Stefani).

Londra, 2 ottobre. — G. E. Gli Stati Uniti pro-

picciagione di Erigor Zohrab. — ...Il cuore di questi sventurati sanguina. La numerosa colonia armena di Bucarest è in gran lutto. Le notizie che giungono quassù da Costantinopoli, attraverso la bocca dei pochi fuggiaschi, ancora trepidanti, sono orrende. I turchi s'ubbricano di sangue, celebrano un fanatico *ramadan* vermiglio. Non mai tanta allegria strage di *gianni* avvenne dalla caduta di Bisanzio, sotto Costantino XIII, ad oggi.

Le stragi ordinate da Abdul Hamid, il Sultano Rosso, dal 1896 al 1898, sono faccende al paragone dei massacri dei quali si compiecono al presente i Giovani Turchi, gli stessi che gridavano ieri: « Turchi, armeni, greci, israeliti, abbracciamoci: noi siamo tutti quanti ottomani, eguali dinanzi alla legge... » L'Armenia, già boreale, non è che un carnaio immenso, coronato da foschissime fiamme, tra le quali migliaia di innocenti periscono della morte la più atroce.

Gli uomini uccisi, le case incendiate, le donne che godono il privilegio della bellezza trascinata lontano dalle loro terre, divise tra gli *harem* dei paschi e del bey. È lo sterminio di una razza.

Alla vigilia della fine, i Giovani Turchi sono invasi da una furibonda frenesia di sangue.

« Հայոց ողբերգությունը. Թուրքահայաստանն ու Անապոլիան », *Armenia*, հ. 2, 15 հոկտեմբերի, 1915, էջ 3

Ամսագրի անդանիկ համարը լույս է տեսնում 1915 թվականի հոկտեմբերի 15-ին: Առաջին էջին գետեղված է «Հայաստանի

իրավունքը» ընդարձակ հողվածը, որը շարունակվում է մինչև ամսագրի երրորդ էջը:

Il Diritto dell'Armenia

attraverso le vicende della sua storia

Per chi abbia un po' di sangue genovese nelle vene, leggete l'articolo, commentato e profondamente visto, parole del comm. Gordon — che riportiamo più avanti — equivale a sfidare il pericolo di un pericoloso delusione come a Armenia ».

E, diciamo subito, non è nella vana speranza di convertire i cultori dell'edottismo e del materialismo come lui a se stessi, che noi diamo luce ad una pubblicazione in favore di quell'idea e nobile patria, che risale al nome di Armenia.

Ci accendiamo all'arduo compito per parlare a quegli uomini, solo degni di tale nome, i quali credono ancora che la società umana si basi a se stessa basata su qualche idealità, su qualche sacrosanto diritto, che vada oltre all'interesse di un singolo individuo di una data nazione; che il vero interesse abbia sempre la sostanza per tutti come sostituito e quindi quando si crede essere non possono conciliarsi e idealità umane, si è perduta la via dritta, la visione del vero bene, in parte ad un morboso stato d'animo. Ci rivoliamo a quei veri patrioti, i quali per patriottismo intendono sì l'ardente amore per la propria terra nativa, ma intendono ancora il rispetto per l'altro patriottismo e soprattutto la solidarietà con chi è trattato peggio del delinquente stesso, orribilmente perseguitato, torturato ed ucciso, perché ama la propria Patria.

Uomini, di cui, fortunatamente, la vecchia e generosa terra d'Italia è madre feconda.

Senza questa fede tutte le fatiche sarebbero male spese. Ma essa potrebbe forse essere sostenuta da quanti si considerano contrari alla guerra, al macello in se stessi e favorevoli solo come a mezzi al servizio di qualche idealità? Prima dell'agosto 1914: sì. Oggi: — e non parliamo dei turchi nati per delinquere, contro le leggi dell'umana società, nonché dei loro discepoli o maestri teutonici — no!

Oggi no, perché le quattro grandi potenze coalizzate in nome della civiltà hanno detto e ripetuto: che combattono non per conquistare, ma per altri ma bensì per il ristabilimento nel mondo della giustizia, e, notate bene, per la libertà e l'indipendenza dei popoli oppressi. E perché: neppure a questi il diritto al libero e civile vivere equivalevole a negare a questa guerra i suoi più alti valori morali, che sono quelle insuperabili fonti di valorosa resistenza, di sublimi sacrifici e di superbi eroismi, che caratterizzano i soldati alleati contro la barbaria.

Ma, osserverà qualcuno, è l'Armenia veramente — degnata di libertà, nel pieno senso della parola, e più precisamente può essa vantare quelle doti di cultura, di maturità civile senza le quali sarebbe vano dotare un popolo di una libertà, di cui non avrebbe la capacità di apprezzare il valore? Ci è doloroso dover rispondere nel caso di un certo disaccordo. « Ah, tralascio la parola ad un inglese: »

« Quel che i Bulgari ed i vitaggiatori ignoranti — scriveva vent'anni or sono Malcol Mac Coll (1) — dicevano dei Bulgari dieotto anni fa, non si vergognano di ripetere a proposito degli armeni, a dispetto della splendida confutazione con cui la libera Bulgaria ha fatto ammutolire i suoi detrattori. Date agli armeni i mezzi di difesa personale e di sviluppare le loro doti eminenti, e vedrete poi se non si metteranno subito a parir, moralmente ed intellettualmente, di qualunque altra razza in Europa ».

Ed ecco uno dei capitoli del nostro programma: dimostrare tale verità molto semplice sì, ma ignorata da quelli, e sono la maggioranza, che hanno voluto ed hanno dovuto giudicare l'Armenia e gli armeni attraverso le lenti dellesione di Stambol.

(1) La responsabilità dell'oppressione verso l'Armenia, 1896, Tipografia Michele d'Autia, Napoli.

«Հայաստանի իրավունքը», Armenia, h. 1, 15 հոկտեմբերի, 1915, էջ 1

Երրորդ և չորրորդ էջերը «Հայոց ողբերգությունը» խորագրի ներքո ներկայացնում են իտալական մամուլից հայոց ջարդերին վերաբերող նյութեր՝ «Թուրքահայաստան», «Թուրքերը ներխուժել են Պարսկահայաստան», «Ռուսահայաստան» ենթավերնագրերով: Ծաղկաբաղը կատարվել է հիմնականում *Corriere della Sera*, ինչպես նաև *La Stampa*, *Secolo*, *Secolo XIX* թերթերից և *Սյոնֆանի* գործակալության տրամադրած նյութերից: Ամսագրի հինգերորդ էջում արտատպված է Գորրինիի հարցազրույցի վերջին հատվածը, որին ամբողջությամբ անդրադարձանք սույն գրքի նախորդ գլխում: Նույն էջին ընթերցում ենք Ալեքսանդրապոլից ստացված «Հայ կամավորները» հոդվածը, որում մասնավորապես ասվում է.

«Թուրքիայի դեմ մղվող պատերազմը հայերի համար սուրբ պատերազմ է, կարելի է ասել մի նոր խաչակրաց արշավանք: Նրանց խանդավառությունն այնքան մեծ է, որ այդպիսի օր չկա, որ Կարսի, Ալեքսանդրապոլի, Երևանի փողոցներում ցույցեր չանեն, հանդես գալով քրիստոնյաներին հարստահարող դարավոր թշնամու դեմ ելույթներով: Բազմաթիվ ուսանող-ուսանողուհիներ կան, որոնք փախչում են հայրական տներից՝ միանալու հայ կամավորականների ջոկատներին: [...] Վերջերս, Ալեքսանդրապոլի առևտրի մի դպրոցից բարձր դասարանի հինգ տղաներ փախել են՝ ճակատ գնալու նպատակով: Նրանցից մեկը, տասնհինգամյա մի պատանի, որին ստիպել էին ետ դառնալ, արցունքն աչքին բողբոջում էր, որ չէին ընդունել տարիքի պատճառով, և հավելում, որ ամեն գնով վերադառնալու էր, և եթե մեկ անգամ ևս մերժեին՝ ինքնասպան կլիներ:

Կարսում, զիմնագիայի բազմաթիվ աշակերտուհիներ, տղամարդու հագուստով կերպարանափոխված, ներկայացել են Կոմիտե, կամավոր գրվելու համար, բայց այնտեղ պարզել են նրանց հնարամտությունն ու ետ ուղարկել: Մի քանի օր անց, երբ Կարս գնացի, հանդիպեցի այս օրիորդներից երկուսին. «Թե՛ն մեզ մերժեցին,- ասացին ինձ,- այդուհանդերձ ինչ-որ բանի օգտակար լինելու նպատակով գումար հավաքեցինք, շատ ծխախոտ գնեցինք,

որպեսզի ուղարկենք զինվորներին»։ Այս բառերն արտաբերելիս անկեղծ ժպիտ ունեին իրենց դեմքին։ Էջմիածնի ճեմարանում չլսված դեպքեր են տեղի ունենում։ [...] Յոթներորդ կուրսի բոլոր ուսանողները պատերազմ հայտարարելու պահից սկսած ընդգրկվել են Անդրանիկի ջոկատում, սակայն միայն մի մասին է հաջողվել նրան միանալ, մնացածները սպասում են իրենց հերթին։ [...] Այո՛, հայերը հպարտ են զոհաբերելու իրենց կյանքն ու ինչքը հանուն հայրենիքի [...]»։

I Volontari armeni

La guerra contro la Turchia è per gli armeni una guerra santa, una nuova crociata, si direbbe. L'entusiasmo fra essi è tale, che non passa giorno senza si abbia qualche manifestazione nelle vie di Kars, di Alessandropoli, di Erivan, con discorsi contro il secolare nemico, l'oppressore dei cristiani. Ci sono tanti studenti e studentesse i quali fuggirono dalle loro case paterne per andar a raggiungere i corpi volontari armeni, che la cosa prende l'aspetto di una vera epidemia.

Recentemente, da una scuola di commercio di Alessandropoli, sette studenti della classe superiore hanno preso la fuga per recarsi al fronte. Uno di essi, un ragazzo quindicenne, forzato di tornare sui propri passi, si lamentava colle lagrime agli occhi, per non essere stato accettato a causa della sua età, ma aggiungeva che vi sarebbe ritornato a qualunque costo, e che se veniva respinto ancora una volta si sarebbe suicidato.

A Kars: narocchio studentesse del

Հարված «Հայ կամավորները» հոդվածից, *Armenia*, հ. 1,
15 հոկտեմբերի, 1915, էջ 5

Այս հոդվածին հետևում է «Վանի ապստամբությունը. իտալական վկայություն» հոդվածը, որը ներկայացնում է ֆրանսիական *Régie* ծխախոտի ընկերության Վանի մասնաճյուղի տնօրեն իտալացի Ն. Լեմիի հետ ունեցած հարցազրույցը.

«Մինչև ապրիլի 4-ը ոչինչ չգիտեի այն մասին, թե ինչ էր տեղի ունենալու,- ասում է Լեմին: Այդ օրը Վանի կուսակալ Ջևդեդ փաշան ինձ ու օսմանական բանկի կառավարչին իր մոտ կանչեց: Քողարկված բառերով մեզ հասկացրեց, որ գիշերը չանցկացնենք հայկական թաղամասում գտնվող մեր բնակարաններում, այլ մնանք մեր գրասենյակներում, որոնք կառավարական շենքերին հարակից էին: Չուզեցավ բացատրել ասածի իմաստը, բավարարվելով ասել, որ կատարել էր իր պարտքը, ժամանակին զգուշացնելով մեզ՝ որպես եվրոպացիներ, և եթե մենք մտածենք չենթարկվել, ապա նա կհրաժարվի ցանկացած պատասխանատվությունից:

Ստիպված եղանք գիշերն անցկացնել մեր գրասենյակներում: Ջզում էի, որ Վանի հայերի տրամադրությունն այլևս առաջվանը չէր, բայց ամենևին չգիտեի, թե ինչ էր հասունանում: Հայաստանի մյուս մասերից եկող լուրերը խորապես ճնշում էին հայ ժողովրդին, բարձրանում էր նրա ցասումը: Այս հոգեվիճակն այնպես սրվեց Վռամյանի ձերբակալության և Իշխանի սպանության հետևանքով, որ ապրիլի վեցին իմ աշխատողներից ոչ մեկը, բոլորն էլ հայ, աշխատանքի չեկավ⁵²: Իրավիճակը լարված էր, զգացվում էր, որ փոթորիկ էր սկսվելու:

⁵² Հ. Գրիգորյանը (2015: 52) «Հովակիմ Շահբազյանի «Դատվան» անտիպ հուշագրությունը» հոդվածում նշում է. «Կասկած չի հարուցում, որ Վանի կուսակալ Ջևդեդի կողմից ազատագրական պայքարի նշանավոր գործիչ Իշխանի (Նիկողայոս Պողոսյան) ու նրա ընկերների սպանության կազմակերպումը Հիրճում և Ա. Վռամյանի դավադիր ձերբակալությունը Վանում դարձան վճռորոշ ազդակներ հայերի ինքնապաշտպանության համար»:

L'insurrezione di Van

Una testimonianza italiana

Il giornale armeno *Horizon* di Tiflis ha intervistato il direttore della sezione di Van della Società anonima dei tabacchi francese « Régie », signor N. Lemi, italiano, sulla insurrezione che durò un mese e che rese possibile l'occupazione della città di Van da parte dell'esercito russo-armeno. Il signor N. Lemi ha così esposto le sue impressioni:

« Fino al 4 aprile io non sapevo niente di quello che doveva succedere. In quel giorno il governatore di Van, Gevded pascià, mi chiamò presso di sé insieme al direttore della Banca ottomana. Con parole oscure egli ci invitò a non passare le notti nelle nostre abitazioni, che si trovavano nel quartiere armeno, ma bensì nei nostri uffici, che erano attigui agli edifici governativi. Egli non ci volle spiegare la ragione di questo invito, accontentandosi di dire che credeva di aver fatto il suo dovere avvertendoci in tempo, siccome europei, e che nel caso in cui noi non pensassimo bene di obbedirgli egli declinerebbe ogni responsabilità. Fummo obbligati a pernottare nei nostri uffici.

« Io notavo che la disposizione d'animo del popolo armeno di Van non era più quella di prima, ma non supponevo nemmeno ciò che stava maturandosi. Le terribili notizie che arrivavano dalle altre parti dell'Armenia, impressionavano grandemente la popolazione armena, in cui andava crescendo lo sdegno e l'ira. Questa disposizione d'animo s'accentuò in tal grado per l'arresto di Vramian e per l'uccisione di Ishkhan, che il 6 di aprile nessuno dei miei impiegati, che erano tutti armeni, si recò al lavoro. L'ambiente era carico d'elettricità e si sentiva che la tempesta stava per scatenarsi.

«*Վանի*

ապստամբությունը»,

Armenia, h. 1, 15

հոկտեմբերի, 1915, էջ 6

Հաջորդ օրը, առավոտյան ժամը վեցին, ապստամբությունն արդեն պայթել էր: Ես քնած էի և արթնացա խուլ ձայնից, որը գալիս էր փողոցից, որտեղ շատ մարդ էր հավաքվել: Դեռ լավ չէի ընկալել իրականությունը, երբ երկու գնդակ փչրեցին սենյակիս ապակիները: Այդժամ ամեն ինչ հասկացա. ժողովուրդը ոտքի էր ելել գեներով պաշտպանվելու: Շուտափույթ հագնվեցի և պատասպար-

վեցի իտալական հյուպատոսությունում, որտեղ մնացի քսանինը օր շարունակ: Այնտեղ գտնվում էին մաս շատ հայ ընտանիքներ, որոնց հյուպատոսը պահում էր իր ծախսով: Քանի որ հյուպատոսությունը գտնվում էր հայկական թաղամասում, ականատես եղա հայկական այն հերոսական ինքնապաշտպանությանը, որը տևեց երեսուն օր: Խոստովանեմ, որ սկզբից թերահավատ էի հայերի հաջողությանը. հայկական թաղամասն ամբողջովին պաշարված էր թուրք-քրդական բանակի կողմից, և որքան էլ կարողանային հերոսաբար մարտնչել, հայերն, իմ հաշվարկով, պետք է նահանջեին ռազմամթերքի ու պաշարների բացակայության հետևանքով: Սակայն կարճ ժամանակամիջոցում նրանք ցույց տվեցին, թե ինչ եվրոպական կազմակերպվածություն ունեին, որը և՛ կատարյալ էր և թե՛ ապշեցուցիչ Թուրքիայի մնան մի երկրում: Անմիջապես «Հայկական խաչ» կազմակերպվեց, որը գերազանց ծառայեց իր նպատակին: Ես հիացմունքով հետևում էի, թե ինչ ճշգրտությամբ և կանոնավորությամբ էին հայկական զորքերը միմյանց փոխարինում, և տեղի էր ունենում ռազմամթերքի և ուտելիքի բաժանում: Այլևս չէի կասկածում. ով ուներ մնան կազմակերպվածություն, չէր կարող չհաղթել: Թշնամին երեսուն օրվա ընթացքում հայերի վրա նետեց 17125 նռնակ:

Թուրքերը Էրզրումից բերել տվեցին նորաստեղծ թնդանոթներ, որոնք անձամբ գործի դրվեցին գերմանացի սպաների կողմից: Սա էլ չկարողացավ հաղթել հայերին: Թուրքը առյուծ է դառնում, երբ գործ ունի անպաշտպան բնակչության հետ: Այսպիսով, Ջևդեղ փաշան իր ցասումը թափեց Վանի հայ բնակչության գլխին: Թուրքերն ավերեցին երեք հարյուր գյուղ, սպանեցին տասնյակ հազարավոր մանուկների ու երիտասարդների: Ջևդեղ փաշան Վան բերել տվեց վերապրյալներին՝ կանանց, աղջիկներին ու ծերերին, և նրանց մի քանի օր առանց ուտելիքի թուրքական թաղամասում թողնելուց հետո մղեց դեպի հայկական թաղամաս, այն հույսով, որ պաշարի բացակայության հետևանքով սպատամբները կհանձնվեին: Թուրքերը, տեսնելով իրենց զոհերի անը և որ այլևս անհնարին էր կոտ-

րել հայերի համառ դիմադրությունը, դադարեցրին պաշարումն ու փախան [...]»:

Ավարտելով իր հարցազրույցը, Լեմին ընդգծում է. «Հնարավոր չէ ապագան կանխագուշակել, սակայն մի բան հստակ է, որ հայերի այս ողբերգության պատճառ հանդիսացողները անպատիժ չեն մնա»:



«Պատերազմը և Հայաստանը», *Armenia*, հ. 1, 15 հոկտեմբերի, 1915, էջ 7

«Արմենիա» ամսագրի անդրանիկ համարի մյուս հոդվածներն են՝ «Սազանոֆի գովեստը», «Պատերազմը և հայերը», «Փարիզի և Իտալիայի հայկական գաղութները», «Կազմակերպված բնա-

ջնջում», «Թորգոմ կապիտանի մի նամակը», «Գրիգոր Չոհրապը
և հայերի մարտիրոսությունը», «Վրե՛ժ», «Զսանը», «Մամուլի մի-
ջոցով. խաչը բարձրացրած Հայաստանը», «Թուրքիան և հայե-
րը», «Հայերի ճակատագիրը», «Ոճրագործություն ընդդեմ հայե-
րի» հոդվածները:

Ամսագրում զետեղված մի հայտարարությունից հայտնի է դառ-
նում, որ «Երբ Իտալիան Ավստրիային պատերազմ հայտարարեց,
Փարիզի հայ համայնքն անմիջապես իր անդամներից հավաքեց
3000 լիր՝ Իտալիայի Կարմիր Խաչի համար: Գումարը հանձնվել
է Փարիզում Իտալիայի դեսպանին»: Մեկ այլ հայտարարություն
ընդգծում է ամսագրին բաժանորդագրվելու կարևորությունը՝ նշե-
լով, որ «հայկական հարցին ձեր սրտակցության ամենագործուն
դրսևորումը կլինի «Արմենիա» ամսագրին բաժանորդագրվելը»:

La Turchia e gli armeni

I bollettini quotidiani della grande guerra, la quale assorbe l'attenzione del mondo civile, distolgono il pensiero dagli episodi di politica interna, che in altri tempi sollevavano l'indignazione della stampa liberale. Così passano inosservati o rimangono ignoti i massacri, che nelle regioni orientali del dominio turco si riproducono da qualche tempo e sembrano rispondere a un piano prestabilito. Parlo degli armeni, di questo popolo martire, che da trent'anni la diplomazia europea venne illudendo con promesse di riforme, che essa avrebbe saputo imporre al Governo turco, ma che non furono mai nemmeno tentate. L'altro giorno sul *Journal de Genève* notizie avute da fonti non sospette, sicurissime anzi, rivelavano l'opera di sterminio, che i soldati e gli irregolari della Sublime Porta stanno compiendo sulle infelici popolazioni cristiane dell'Armenia. Col pretesto di cercare armi nascoste, centinaia di abitanti vennero fucilati in ogni villaggio; altri, che non vollero decidersi ad abbracciare la religione dell'Islam, vennero apediti verso il Sud, a gruppi di cinquecento o seicento persone per volta, in gran parte donne, vecchi, fanciulli. A questi deportati venne vietato di portare con sù alcuna cosa delle loro robe: qualcuno di loro, che era riuscito a nascondere negli abiti qualche poco di denaro, venne derubato e spogliato per istrada. Gli averi, le case, i negozi dei

«Թուրքիան և հայերը»,
Armenia, h. 1, 15 հոկտեմբերի,
1915, էջ 11

Հետաքրքիր են «Արմենիա» ամսագրի քաղաքական բովանդակության վերլուծական հոդվածները, որոնց մի մասը կրում է իտալացի լրագրողների ստորագրությունը, իսկ մյուս մասը ծածկանուններով են՝ Սուրեն, Դոկտոր, Գարեգին, Արամայիս, Արմենիուս և այլն:

Օրինակ *Դոկտոր* ծածկանունով է ստորագրված «Կազմակերպված բնաջնջում. թուրք-գերմանական արյունարբու ամբոխն Հայաստանում» հոդվածը, որում հեղինակը գրում է.

«[...] Կրկին հոսում է հայոց արյունը: Արդեն մի քանի ամիս է, ինչ գերմանացիների վարժեցրած և գրգռած թուրքերն իրականացնում են մի սարսափելի ծրագիր. հայ ժողովրդի բնաջնջումը իր իսկ դարավոր հայրենիքում: Եվրոպայում պատերազմի պայթյունից անմիջապես հետո թուրքերը բացահայտ հայտարարում էին, որ հայերի ճակատագիրն արդեն որոշված էր. թուրք-գերմանական ծրագիրը որոշել էր հայերի բնաջնջումը: Թուրքերն այլևս կարիք չունեին փնտրելու կամ հորինելու հայկական անարխիսայի կամ ապստամբության պատրվակ: Նրանց բավարար էր գերմանացիների գործածած «անհրաժեշտությունն օրենք չի ճանաչում» նշանաբանը⁵³: 1895-96 թթ., Աբդուլ Համիդը նոր էր ավարտել Հայաստանի արյունալի ջարդերը, կոտորելով քաղաքակիրթ ու քրիստոնյա երեք հարյուր հազար անմեղ մարդու, երբ գերմանական Կայզերը շտապեց մահմեդականների խալիֆին տանել իր կայսերական շնորհավորանքները, սեղմել հայկական արյունով դեռևս աղտոտ ձեռքը ստանալու իր անարգ արարքի դիմաց բազում արտոնություններ, ինչպես նաև անձնական մվերներ, որոնց արժեքը մեկ միլիոնից առավել էր: Մենք՝ հայերս, կայսեր այդ աստիճան

⁵³ *Necessitas non habet legem* (լատ.) – «Անհրաժեշտությունն օրենք չի ճանաչում» արտահայտության հեղինակն է Ք.ա. առաջին դարում ապրած հռոմեացի դրամատուրգ Պուբլիոս Սիրիոսը: Արտահայտությունը գործածվել է նաև ԺԶ դարում Նիկոլո Մաքիավելիի կողմից մասամբ ամփոփելու այն գաղափարը, որ թագավորությունն ու սեփական շահերը պաշտպանելու նպատակով իրականացված գործողություններն արդարացված են, նույնիսկ եթե դրանք հակադրվում են օրենքին և բարոյական նորմերին:

անարգ արարքի առջև շվարեցինք: Սակայն, միանգամայն հեռու էինք երևակայելուց, որ այդ ողբերգական դեպքերից քսան տարի անց գերմանացիների հրամանատարության ներքո գտնվող թուրքական բանակը կիրականացներ Թուրքահայաստանում տեղի բնակչության բնաջնջումը: Դեռ ավելին, մենք միամտաբար որոշակի լավատեսություն էինք տաժում, համարելով որ թուրքական բանակում գերմանացի սպաների ներկայությունը կզսպեր թուրքերի վայրենի բնագոր: Այն ինչ մեր մտքով չէր կարող անցնել, այսօր, ցավոք, ողբերգական իրականություն է: [...] Թուրք-գերմանացիների վայրագությունները վեր են ցանկացած ամենահրեշավոր երևակայությունից»⁵⁴:

